


Մ Ի Օ Շ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԱՅԳԱՅԻՆ . ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ . ԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ


ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ՇՐՋԱՆ ՍԻՆՍԵՆՅ



ՅԵՐՈՒՍԱԼԱԻՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1872



ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏՄԻ
ԹԻԻ 11.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՆՈՅՆԵՐԻՐ 30.
1872.

ԸՅԳՆՅԻՆ, ԲԱՆԱԹԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

ԽԲԵԻ ԱՌԱՋԻՆ ԽԱՐԻՍԻ ԸՆԿԵՐԱԿԱՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ (*)

ՆԱԽԹԱՅ յօդուածով բացատրեցինք թէ ի՞նչ է Սահմանադրութեան ոգին, թէ ի՞նչ նշանակութիւն ունի մեր Մարտիկի համար իւր արդի դրից ակջ թէ քիչ հասկանալով Սահմանադրութեան ոգին ի՞նչ վնասառիթ հետեւանք և արդիւնք ունեցած է և թէ՛ աւանդաւոր և չարեայ պատճառ մի միայն բարոյական կրթութիւնը համարելով՝ հետեւեցուցինք՝ թէ արդի մը իսկական բարեբաւութիւնը, խաղաղութիւնը և իրաւանց երաշխաւորութիւնը իւր բարոյականութեան մէջ է, իսկ թշուառութիւնը անբաւարարականութեան մէջ:

Իմա տեսնեմք թէ՛ հայ—լրագրութիւնը ի՞նչ նշանակութիւն ունի արդի յառաջագիմութեան նկատմամբ: Չեմք ուզեր այս մասին երկար խօսիլ, վասն զի նորա արդի վիճակը, ինչպէս ամենուրեք նոյն է, աւելի ողորդ արժանի է, քան թէ խորհրդածութեան. աւելի կարեկցութեան արժանի է, քան թէ քննադատութեան. ըստ որում ի՞նչպէս ասած եմք ուրիշ առթիւ, թէ հայ—լրագրութիւնը աւելի անխափան դարձած է իւր դրիւքը, քան թէ աղքատիք. որովհետեւ հակառակ իւր պարտուց, ընդգէժ իւր սկզբանց արդարութիւնը պաշտպանելու տեղ աւարտականութեան մէջ:

(*) Հարունակութիւնը, տես թիւ 10:

նիրաւութիւնը կը ջատագովէ . ճիշդ մարտութեան ակոյեան հանդիսանալու տեղ ստութեան յաղթանակը կը բարոզէ . և այս ոչ ուրիշ բանի համար , այլ միայն վատ շահամոլութեան և իմաստակութեան գերի լինելով :

Երբ մարդոյ մը մէջ շահասիրութիւնը կը տիրէ , նորա համար ամեն հանրաշահ սկզբունք մնուիք են և նորա մէջ ամեն բարի զգացմունք կը մեռնին . այսպէս է ինչպէս ամեն անհատի համար , նոյնպէս ամեն վարչական դրութեան և պաշտօնէութեան համար : Այս մեծ և աղէտաւոր թերութիւնը եւս միայն բարոյական կրթութեամբ կը լեցուի : Ինչպէս անհրաժեշտ է անբնական է , մշակութեան կամ երկրագործութեան օրինաց անհմուտ մէկը այսպիսի պաշտօնի մը վերայ հաստատել , վասն զի իւր տգիտութեամբ փոխանակ աշխատեալ կամ գարնան մէջ սերմանելու , ամռան մէջ հնձելու յուսով , ամառան մէջ պիտի սերմանէ ձմեռան մէջ հնձելու ակնկալութեամբ . նմանապէս երբ մարդ մը չէ կրթուած բարոյականութեամբ և չը գիտեր բարոյականութեան օրէնքը կամ սահմանը , բնականաբար այնպիսին աւելի կ'ապականէ քան թէ կը սրբէ , աւելի կ'աւրէ , քան թէ կը շինէ : Տգիտութեան մասին մի և նոյն պատկերը ունի մեր լրագրութիւնը (քիչ բացառութեամբ) :

Թողումք այս և տեսնեմք թէ՛ աղբիւն մէջ դպրոցները կամ դպրոցաց շատութիւնը ի՞նչ աստիճանի կարեւորութիւն ստացած է Ազգին ճշմարիտ յառաջագիմութեան համար . տեսնեմք թէ՛ ի՞նչ օգուտներ մատակարարած է մինչեւ ցարդ . ի մի բան տեսնեմք թէ՛ ի՞նչ են դպրոցները այժմ և ի՞նչ հարկ է , որ լինին : Այս ամենը միառ մի ցուցնելու և բա-

ցատրելու համար , պէտք է նախ համաօտիւ բացատրել . թէ ի՞նչ է բարոյական կրթութիւնը , և ի՞նչ կ'ուսանի մարդ բարոյական կրթութեամբ : Բարոյական կրթութեան սահմանն է երկու բառով ձանաչումս պարզոց : Ուրեմն բարոյական կրթութեամբ մարդիկ կ'ուսանին իրենց պարտաւորութիւնքը :

Վարդկային պարտաւորութիւնքը ընդհանրապէս երեքի կը բաժնուին , այն է պարսաւորութիւնն առ ասպարած . պարսաւորութիւնն առ ընկերն և պարսաւորութիւնն առ անյն . կամ համաձայն ասեմք . «Երաւունք և սէր առ ընկերն , որոյ մէջ թէպէտեւ արտաքին կերպով մարդկային պարտաւորութիւնքը երկուքի բաժնուած են , բայց երբ ընկերական սիրոյ օրէնքը քննեմք , կը տեսնեմք , որ մարդոյ առ անձն իւր պարտաւորութիւնը ի նա ամբողջաբար է . զի պարտք կը դնէ նոյն սիրոյ օրէնքը անձնիւր մարդոյ վերայ , «Իբէլ ընկերն իբէլ զանյն իբէլ : Պարտաւորութեանց գլխաւորներն գտնէ որոշեղէն զկին . նշանակեմք նոյնպէս իւրաքանչիւրին գործադրելու եղանակը և անկէ յառաջ եկած օգուտները : Վարդը կոչուած է յաշխարհ բարոյական օրէնքը ցուցանելու համար , այսինքն լինիլ այնպէս , ինչպէս , որ տիեզերաց Արարչէն ստեղծուած է . յինքն քնն ցուցանել զպատկեր Աստուծոյ : Վարդ՝ իւր սոյն կոչումը կարող է ի գլուխ տանիլ միմիայն պարտուց ճանաչմամբ և կատարմամբ , այսինքն սիրելով զԱստուած , սիրելով զընկերն և սիրելով զանձն : Երբ մարդ աշխարհի մէջ ճանաչէ իւր բարձր և վսեմ կոչումը , նորա համար Աստուած , ընկեր և անձն բառերը իրերաց հետ սերտ ներդաշնակութեամբ կ'ապուած են : Այն ժամանակ մարդ կը սիրէ իւր ան-

ձը իւր ընկերի համար, կը սիրէ իւր անձի առողջութիւնը 'ի դիպահանջ ժամանակի իւր ընկերի բարութիւնն առնելու համար, կամ որ նոյն է նորա օգտի և բարեխառութեան զսէլու համար. նմանապէս կը սիրէ ընկերը Աստուծոյ համար, ամենակարող Արարչի արարածը լինելուն համար. վերջապէս նորա փառաց և կամաց համար: Ասկից կը հեռեւի որ մարդ կոյն պարտաւորութեաց աղբերակն մի է և գերազայն, որ է Աստուած:

Արդ առ Աստուած ունեցած պարտաւորութիւնքը կը կատարէ յերկու փեռան սնանելով. զնա միայն ճանաչելով ճշմարիտ Աստուծոյ և նա երկրպագելով հոգով և ճշմարտութեամբ: Երբ մարդ իւր սրտին մէջ Տիրոջ երկիւղը սնուցանէ, բնականաբար լցուած կը լինի առ Այն սուրբ և անկեղծ յարգանքը և ջերմ շնորհակալութեամբ և երախտագիտութեամբ: Այսոր համար աշխարհային ոչ մի երկիւղ արժէք չունի. արիական առաքինութեամբ այս աշխարհիս մէջ, որ մարդոց համար սառտերազմի ընդարձակ դաշտ մի է, կը զինի ամեն փորձութեանց դէմ. կը դիմադրուէ անցուսահատ ամեն պատահմանց դէմ, որոց մէջ կը կրթուի առաւել եւս մարդոց բարոյականութիւնը եւ ազատութիւնը: Արդ յերկիւղ Տեառն սնանելով իւր կամքը և իւր ամեն գործերը կը համաձայնեցնէ ըստ ամենայնի բարոյակալութեան օրէնքին, որ Աստուծոյ և բարոյականութեան Աստուծոյն կամաց վերայ հիմնուած է. կը գործէ Աստուծոյ փառաց համար, կը սքանչանայ նորա ամեն կատարելութեանց վերայ. կը ջանայ կատարեալ լինիլ, որպէս կատարեալ է Աստուած. շնորհակալ կը լինի այն ամեն բարութեց համար, որով մարդ լիացած է: Այլ

ջապէս կը մերժէ և կատէ, ամեն բան ինչ որ Աստուծոյ կամաց, կատարելութեանց եւ Աստուծոյ ամեն հակառակ է: Այլ խօսքով մարդ յերկիւղ Տեառն ծնանելով, սնանելով և զարգանալով՝ կը ճանաչէ, որ աշխարհը չէ երջանկութեան կայան, այլ ժամանակաւոր տեղ մը, ուր մարդ կոչուած է, իւր զինուոյ յաջողակութեամբ ստանալ այն գոռականը, որ իւր ապագայ իրական կենաց սկիզբն է. հեռեւաբար նա, այսինքն իւր կոչումը ճանաչող մարդը՝ չորսներ աշխարհի մէջ տեւական հանգստութիւն և երջանկութիւն. նորա հոգին և սիրտը բնաւ աշխարհի մէջ առարկայի մը կատուած չը լինելով, հանապազ կը ձկտին այն գերագոյն Աստուծոյ ինքն է ճշմարիտ երջանկութիւն և մշտնջենական հանգստութեան:

Արդ առ Աստուած ունեցած իւր պարտքը հատուցանելով կրնող նի և կը հաւատայ թէ՛ Աստուծոյ մէջ, ստեղծող և նախախնամող աշխարհի, որով ոչ մի պարագայի մէջ չանպատուէր զԱստուծոյ, չանարգէր նորա մեծութիւնը արարածի զօրութեան հաւատարմանով: Խոստովանելով թէ՛ Աստուծոյ մէջ, հաւատ չընծայէր կատարելութեան, սնտիքներու և կանխակալ կարծեաց, որով շատ մարդիկ կը կարծեն թէ, ունին նոյնպէս արարածը մի այնպիսի զօրութիւն, զոր Աստուած միայն ունի: Այստեղ այն հեթանոսութիւնը, որ այսօր ամեն մարդոց սրտին և հոգւոյն վերայ կիշխէ, որ է չափազանց աշխարհասիրութիւն. վասնզի մարդ մինչդեռ պարտաւոր է իւր սիրտը միայն Արարչին նուիրել և միանգամայն խոստովանիլ, որ միայն նորա կը պատկանի, երբ արարածին կը տայ, կը նշանակէ արարածը Արարչին աւելի սիրել և իւր յոյսն

ու հաւատարմութեամբ արարածի վերայ գնել :
Վերջապէս հաւատարմութեամբ մարդիկ այս
մեծ ճշմարտութեան պիտի ծառայեն
Մտուածոյ այնպէս , ինչպէս նորա կա-
մայ և կատարելութեանց համաձայն է .
պիտի պաշտեն զՄտուած հոգւով և
ճշմարտութեամբ . իրենց պաշտօնը և
յարգանքը ճշմարիտ ճանաչողութիւն
պիտի նուիրեն Մտուածոյ և պիտի
ջանան նորա կամայ համաձայն կեանք
և գործ ունենալ աշխարհիս մէջ : Մյս
ամենը մարդկանց առ Մտուած ու-
նեցած պարտաւորութեանց պայման-
ներն են , զորս երբ լինի 'ի գործ գնեն
մարդիկ , այն ժամանակ պիտի տեսնեն
եղիլը նոր , որոյ մէջ ճշմարիտ Մտուածը
կը պաշտուի . և նորա ճշմարտութիւնը
կը թագաւորէ մարդ արարածոց սրբ-
տին և հոգւոյն վերայ փոխանակ այն
նորամուտ տիրողներուն , այսինքն
մարդկային շատ մը մօլի կրից , որոց
երեսէն հետզհետէ աշխարհը պիտի
ապականի և աւերի :

Համառօտիւ բացատրենք նայն
որէս թէ մարդկանց առ իրեարս ու-
նեցած պարտաւորութիւնքն ինչ են
և թէ անձնիւր մարդ լցուցանելով
իւր պարտաւորութիւնքը ինչ բա-
րեաց կը տիրանայ : Մարդիկ առ ի-
րեարս զանազան պարտաւորութիւնք
ունին , որոց ամենուն լրումն է արդա-
րութեամբ իեալ : Սակայն մարդիկ պար-
տաւոր են իրենց գործոց մէջ իրենց
յարաբերութեանց մէջ արդար լինիլ ,
վասն զի փոխանակ արդար լինելու ,
անիրաւին . փոխանակ ճշմարտութե-
ստութեան պաշտօն մատուցանեն ,
փոխանակ միմեանց օգնելու միասնեմ .
փոխանակ հղօրը իրմէ տկարին կարեկ-
ցելու , զրկէ իւր իրաւունքէն . այն
տոտեն մարդկային ընկերականութիւ-
նը կարող չէ կառավարիլ և իւր օրի-
նաց մէջ յարատեւել . որովհետեւ

արդարութիւնն է միայն հիմն 'կար-
գաց և օրինաց և կապ միարանու թեան
Նոր վերցուի արդարութիւնը աչ-
խարհէն , այն ժամանակ ամեն օրէնք
բռնութիւն կը լինի և ամեն ընկերա-
կանութիւն վայրենութիւն . այն ժա-
մանակ թշուառութիւնը իւր վայրագ
ձիւրաններուն տակ կը մտնէ բովանդակ
մարդկային ազգը . վասն զի առանց
արդարութեան ոչ իրաւունք և ոչ
պարտք նշանակութիւն ունին : Մ-
ռանց արդարութեան առաքինու-
թիւնք ստուեր են . ինչպէս բարերա-
րութիւնը պարզ կեղծաւորութիւն .
վասն զի կան մարդիկ , որ միայն բա-
րերար անունն ստանալու և իրքեւ բա-
րերար համբաւ ունենալու համար ,
մէկը զրկելով միւսը կը բարերարեն .
մէկը վիրաւորելով միւսը կը բուժեն ,
մէկը տիրութեան և թախծութեան
մէջ համակելով ուրիշ մը կը սիրովեն
և կը մսխթարեն . մէկ խօսքով մէկը
յուսահատութեամբ սպանանելով ,
ուրիշ մը կը բաջալերեն . այս ամենք
բնաւ ուղղութիւն չունին իրենց մէջ
և բարբարոսութիւն կը համարուին
քան թէ մի այլ ինչ : Սոյն օրինակ
պարտուց հատուցումն չեն սրահան-
չեր մարդիկներէն ոչ բնութեան օրէնք
և ոչ բարոյականութեան :

Մարդիկ առ ընկերն ունեցած պար-
տուց մէջ արդարութեան հետ ուղղու-
թիւն ևս 'ի գործ պէտք է գնեն . որով
հետեւ շատ անգամ մարդիկ արդարու-
թեան խտուրտութեանը չը տանելով , կը
լքանին և կընկճին . սակայն ուղղու-
թեան հետ կապուած արդարութիւ-
նը պարտք կը դնէ մարդկանց վերայ
զոհել երբեմն իրենց արդար իրաւուն-
քը յօգուտ ընկերականութեան և 'ի
յառաջադիմութիւն մարդկութեան :
Գուցէ ծանր թուի այս շատերուն
բազաբական օրէնքին ապաստանելով

որ ոչ մէկ ժամանակ իրաւանց զօհր
չուգեր, սակայն լաւ գիտեմք, որ
մարդկային ակար մտքէ ծնունդ ա-
ռած ամէն օրէնքներն անկատար են,
հետեւաբար կատարելագործութեան
ենթակայ. մինչդեռ բարոյականութեան
օրէնքը՝ որ ճշդապէս մարդ-
կանց պարտուց և իրաւանց սահմա-
նը կը գծէ, աշխարհի օրինաց պէս
անկատար չէ. այլ կատարեալ, վասն
զի կատարեալ Աստուծոյ մատանց կա-
տարեալ արտադրութիւնն է:

Արդ օրինաց պարտաւորութեամբ
կոպտուած են մարդիկ իրերաց հետ.
Հոս պէտք է սուրբ սէրը յանձնէր սի-
րոյ զանազանել, զոր մարդիկ իրենց
չարութեանց եւ ամբարշտութեանց
ծածկոյթ կամ պատրուակ չլինելով՝ նո-
րա անուան տակ ապաստանելով՝ ան-
խիղճ կերպով կը գործեն ամեն բան
զոր իրենց վայրագ կամքը կը թերադ-
րէ, կը գործեն ՚ի շինութիւն անձանց
և ՚ի բանգործման և յաւերածման ողջոյն
աշխարհի: Սուրբ սէրը՝ որ ընկերակա-
նութեան կապն է, ըստ Առաքելոյն է
զօր կապարձան, որով կը պարտաւորին
մարդիկ իրենց ընկերաց համար կամե-
նալ ամեն բարի բան, զոր կամին վա-
սըն անձանց, փափագիլ նոցա բա-
րութիւնը, կենաց ասպնջութիւնը
և խաղաղութիւնը, իւրեանց տաղան-
դը և ճանաչողութիւնը նոցա բա-
րեաց և օգտին համար ՚ի գործ դը-
նել, մէկ խօսքով կը պարտաւորին ի-
րենց ընկերաց համար անձնագիր եւ
անձնուէր լինիլ:

Այն պարտաւորութիւնքը ոչ ժա-
մանակ լրիւ ՚ի գործ կը դրուին. երբ
ընկեր բառին սահմանափակ նշանա-
կութիւն չը տան մարդիկ, նման շը-
րէից և շեթանասոց ընկեր ասելով
չիմանան իրենց մերձակորները, զա-
գականները, ազգակիցները, բարե-

կամներն ու ծանօթները. այլ ամեն
մարդ առանց ազգային խտրութեան,
առանց կրօնական խտրութեան, ա-
ռանց փիճակի և դրից խտրութեան.
վասն զի ամեն մարդ մի և նոյն նիւ-
թէն, մի և նոյն արիւնէն ստեղծուած
է, մի և նոյն Արարչէն հաստեալ է:
Աւրեմն հարուստը՝ աղքատին, տգէ-
տը՝ խմաստունին, հովիւը՝ հոտին,
հարատակը՝ վեհապետին ընկերն է:
Չը կայ մարդկային ցեղին մէջ կոչման
խտիր կամ դասակարգութիւն. ամէն
չը Բարի ստեղծուած էն և Բարի վնէլ-
համար ստեղծուած էն:

Այժմ ամեն մարդոյ սիրտն և հոգին
Աստուծոյ սիրով բոցավառի, եթէ
ամեն մարդ Աստուծոյ կատարելու-
թեանց և սրանչելեաց վերայ հիացող
սիրտ կրէ. եթէ ամեն մարդ ճանա-
չէ բարոյական օրէնքը և ճանաչէ իւր
ամեն պարտաւորութիւնքը և միան-
գամայն ՚ի գործ դնէ. այն ժամանակ
կարծուած խտիրներն ինքնին կանհա-
տին, կաշուած միջնորմքն ինքնին
կ'անկանին և կը խորտակին:

Այնչեւ հոս եւս մարդոյ մը առ
ընկերն ունեցած պարտաւորութեանց
համառօտութիւնն էր. ուստի տես-
նեմք թէ՛ մարդոյ առ անձն ունեցած
պարտաւորութիւնքն ի՞նչ են: Այժմ
հարեւանցի ակնարկով մի միայն նկա-
տեմք մարդոյ սոյն պարտաւորութիւն-
քը, ամենէն դիւր հասուցանելի պի-
տի գտնեմք. որովհետեւ կը տեսնեմք,
որ առ հասարակ ամեն մարդ աւելի
իւր անձին համար կաշխատի, կը բըր-
անի և կը տքնի. իւր անձին համար
ամեն դժուարութեանց կը դիմագրա-
ւէ, ամեն նեղութեանց կը համբերէ
ամեն արկած անարտունջ կը տանի.
կարճասեմք իր անձը իր ընկերէն աւելի,
իւր ազգէն աւելի, մարդկութեն աւել-
ի և մինչեւ անգամ Աստուծոյն ա-

ւելի կը սիրէ : Բայց երբ իրեն ճշմարիտ մարդ, և իբրեւ ճշմարիտ քրիստոնեայ քննեմք մարդոյ առ անձն իւր ունեցած պարտաւորութիւնքը պիտի իմանամք, որ առ Աստուած և առ ընկերին ունեցած պարտաւորութեանց համար հաւասար է և գուցէ աւելի դժուարահատուց, վասն զի անձին պարտաւորութիւն չի նշանակեր առանց զԱստուած և զընկեր ի մօտի ունենալու աշխատել. անձին պարտաւորութիւն չը նշանակեր միայն մեր կամաց և հաճոյից համար ամեն օգտակար օրէնք և սկզբունք առ ոսն կոխել, անձին պարտաւորութիւն չը նշանակեր զի կը զայլս յիշատանց, յաւիշտակել առանց սրտի կսկիծ մը ըզգալու այլոց իրաւունքը, որոյ կապուած է նոցա կեանքը. վերջապէս անձին պարտաւորութիւն չը նշանակեր յուսով մեր զօրութեան, ապաւինելով մեր հարստութեան, յանդորրութիւն մեր մղի կենաց հալածել զարդարութիւն, հալածել զճշմարտութիւն, որ ազգաց կեանքն է և հոգին : Այս ամենը անձին պարտաւորութիւն չեն և չեն կրնար լինիլ :

Մարդոյ առ անձն իւր ունեցած պարտաւորութիւնքը կը պահանջեն. որ զգաստութեամբ բարեպաշտ չափաւորութիւն ունենայ իւր վայելման մէջ, իւր ցանկութեանց մէջ և իւր խնդրոց մէջ. վասն զի մարդ չափաւորութիւնը եւ բաւականութիւնը չը սիրելով շռայլութեան եւ զեղխութեան կը տայ ինքը զինքը, որով կը մեղանջէ թէ իւր անձին դէմ, թէ ընկերին դէմ և թէ Աստուծոյ դէմ : Շռայլ և զեղխ լինելով մարդ իւր անձին դէմ կը մեղանջէ, որովհետեւ շռայլութիւնը և զեղխութիւնը անբնական մարդոյ համար լինելով. քնսկան օրէնքը կը խոսնգարեն, կը

փծացնեն մարդոյ մէջ ամեն բնական ընդունակութիւնք և կոպտականն նորա բարոյական կեանքը. վասն զի շռայլութեամբ նիւթը բարոյականութեան կը տիրէ. մինչդեռ նա պարտաւոր է իւր չափաւորութեամբ այնպէս առնել, որ բարոյականութիւնը նիւթին վերայ իշխէ : Մարդ շռայլ կեանք ունենալով՝ իւր ընկերին դէմ կը մեղանջէ, վասն զի շռայլութեամբ մարդասիրական և բարերարելու առնն սուրբ զգացմունքները բնաջինջ կը լինին : Շռայլ երբ տեսնէ իւր նըմանը. կամ աւելի ճիշդ է ասել իւր եղբայրը անօգնական և ասպատակար, չզգար բնաւ նորա վերայ ամենափոքր կարեկցութիւն մի. երբ տեսնէ որ սովամահ կը լինի, չը սիրեր պատառ մի հաց տալ, երբ տեսնէ որ իւր ընկերը անիրաւ տեղը կը հալածուի և կը հարստահարուի, չուզեր օգնել և մխիթարել զայն իւր կարողութեամբ և ձեռնհասութեամբ : Մարդ շռայլ կեանք ունենալով՝ առ Աստուած ունեցած պարտաւորութեանց դէմ կը մեղանջէ, վասն զի փոխանակ ըստ պարտաւորութեան՝ իւր սիրտը և սէրը միայն Աստուծոյ նուիրելու, նիւթական կենաց զոհած կը լինի. փոխանակ իւր մարմինը հոգւոյն գործիք և հպատակ դարձնելու, հոգին մարմնոյն հպատակ կեցուցած կը լինի. վերջապէս իւր առնն մտածութիւնքը և հոգը փոխանակ միայն Աստուծոյ և նորա օրինաց վերայ ընդ միշտ դարձնելու, շռայլութեան և զեղխութեան վերայ դարձուցած կը լինի. մէկ խօսքով ըստ Առաքելոյն նորա Աստուածը որովայն է : Ուրեմն մարդոյ առ անձն ունեցած պարտաւորութիւնն է չափաւորութիւն և բաւականութիւն կենաց, որով ո՛չ Աստուծոյ կը հեռանայ և ո՛չ յընկերէ : Ահաւասիկ բարոյական կրթ-

Թուօթեան սկզբունքները , զորս ըստ մերովսանն ջանացինք համառօտել : Այս ամենէն պարզ և մեկին կերեւի , թէ որչափ մարդիկ պարտաւոր են կրթութիւն բարոյականութեամբ . թէ որչափ կարեւոր է մարդկանց բարոյականութիւնը . վասն զի աշխարհս ինչպէս բնական օրինօք , նոյնպէս և բարոյական օրինօք կը կառավարի և տեսանք միանգամայն , որ մարդկային ընկերակաւ նութեան տարրերքն ու հիմունքը բարոյական կրթութիւնն է :

Բարոյականութեան այս ամեն ըսկզբունքները իբրեւ հիմունք համարելով տեսնեմք այժմ թէ մեր Ազգին դպրոցները ի՞նչ ու զոլութիւն ունին : Իրաւ է որ մեք դպրոցաց մասին յատուկ վիճակագրութիւն չունինք մեր ձեռքը և ո՛չ մասնաւոր քննութիւնք , նոյնին վիճակը պատկերացնող , այսու ամենայնիւ ցարդ դպրոցներէն ելածներուն վերայ ակնարկմը եթէ ձգեմք , դիւրաւ պիտի կարողանամք նոցա արժէքը ճշտութեամբ գնահատել : Այն նկատելիք խկ կէտը այս պիտի լինի , թէ՛ բարոյականութիւն ազդային զըզրոցաց մէջ ի՞նչ տեղ գրաւած է և ի՞նչ աստիճանի կարեւորութիւն ստացած , որոյ ամեն ոք վերահասու պիտի լինի , եթէ մեր հասկացած և ըստ այնմ բացատրած բարոյական կրթութեան սկզբունքները իւր ձեռքը իբրեւ կանգուն առնելով մտնէ դպրոցաց մէջ և չափէ նոցա վիճակը , որով զգալի կերպով պիտի տեսնէ բարոյականի մեծ թերութիւնը : Վույցէ այլք մեզ հակառակին այս մասին , սակայն մեք թէ՛ համոզելու և թէ՛ մեր ասածը հաստատելու համար Ազգին կեանքը հսկմաող եւ ապականող մոլութիւնքը մէջ պիտի բերեմք , որք կենդանի ապացոյցներ են բարոյականութեան պակասութեանը :

Ի նոտանէք մարդկութեան վառարանն է , ուստի որչափ որ ընտանեկան կեանքը անարատ , կենդանի և բարձր լինի , նոյնչափ մարդկային ընկերակաւ նութիւնը անարատ , կենդանի և բարձր կը լինի : Ի նոտանեկան կենաց անարատութիւնը , կենդանութիւնը և բարձրութիւնը ուսկից կըսկսի . ըստ մեզ դպրոցներէն , ուրեմն դպրոցներն ընտանեաց ձուլորաններն են : Զուլիչ գործարանի մը կազապարները որչափ օրինաւոր և կատարեալ լինին , այնչափ նոյն գործարանի արտադրութիւնքն ազնիւ և յարգի կը լինին : Այս սկզբամբ դպրոցի մը բարոյական հիմունքը որչափ հաստատոււն լինի , այնչափ բարոյական արդիւնքը ընտիր և անարատ կը լինի :

Արբ ամեն ողջստոհ անձն ակնարկմը ձգէ Ազգին վիճակին վերայ , մեզ հետ պիտի խոստովանի որ ամբողջ ազգային կենաց մէջ ապականութիւն և անբնական կացութիւն մը կը տիրէ , պիտի խոստովանի որ մեր մէջ ընտանեկան կեանքը չունի այն վսեմութիւնը և բարձրութիւնը զոր անհրաժեշտ պարտ էր ունենալ . չունի այն ազնիւ յատկութիւնը , որ իրմէ կաղմուած Հայ-ընկերութեան կենդանութիւն և եռանդ ներշնչէ , և այս խիստ բնական է իւր դրից . վասն զի կենդանութիւնը բարոյականութեան արդասիք է , ուր չը կայ բարոյականութիւն , չը կայ հին ո՛չ կենդանութիւն և ո՛չ ոգի : Աւրեմն մեր մէջ ընտանեկան կեանքն ընդդէմ բարոյական օրինաց , ընդդէմ հաւատոյ և ճշմարտութեան ընկած է այն անարգ վիճակին մէջ , յորմէ բարձրացուց զայն քրիստոնէութիւնը : Ինչո՞ւ համար է այս աղետալի կեանքը , որովհետեւ ընտանիքը կաղմող անգամք իրենց կենաց մէջ պարտադանց են , անհաւատարիմ են

առաջուածային օրինաց դէմ. երբ հաւ-
տարիմ լինին ընտանեաց անդամք ի-
րենց պարտուց, իրենց անբախ ուխ-
տին և սուրբ կոչման, անսրբութիւ-
նը և խառնակ կեանքը անհետ կը լի-
նին: Աւր կուսանին մարդիկ այս պար-
տաւորութիւնքը և ինչով կուսանին.
եթէ սոյն հարցմանց ի պատասխանի
մասնաւոր տեղ մը չը ցուցնենք, այ-
սինքն չըսեմք թէ՛ դպրոցաց մէջ կու-
սանին, այսու հանգերձ՝ այս ևս ճշմա-
րիտ է, որ մարդմը սուր տեղ և ինչ
առարկայէ որ բան մը ուսանի, նոյն
տեղը, նոյն առարկայն այն մարդուն
գարոյն կը լինի: Հետեւաբար մարդիկ
ընտանեկան կենեաց պարտաւորութիւն-
քը դպրոցներէն կ'ուսանին և բարո-
յական կրթութիւն կուսանին: Վանի
որ այսօր ազգային կենեաց մէջ այս կու-
տարելութիւնը չկայ և երթալով ըն-
տանեկան կեանքը աւելի կը վատթա-
րանայ, այս մի անհերքելի ապացոյց է
որ մեր դպրոցները չունին ընթանի՛ք, այ-
սինքն հայր, մայր պատրաստելու վսեմ և
բարի յափշտակներ. որովհետեւ իրենց
հիմունքը բարոյական կրթութիւնը չէ:
Թողումք ընտանեկան կեանքը, հա-
րեւանցի ակնարկ մը ևս ազգային ար-
տաքին կենեաց վերայ ձգեմք. տեսնեմք
թէ ազգային անհատք իրենց գործառ-
նութեանց և յարաբերութեանց մէջ
ի՛նչ ուղղութիւններ ունին: Այս մա-
սին նոյնպէս խորագնին նկատողութե-
հարկ չը կայ. վասն զի ամեն գեղձ-
մունք ակնյայտնի կը տեսնուին. ամեն
ուրեք նենգութիւն, խարդախու-
թիւն, շահասիրտութիւն, ստութիւն,
հեռ, նախանձ, ատելութիւն և աւ-
լըն և այլն կը տիրեն: Եթէ յանգստու-
թիւն չը համարուի՝ թողլով ժողո-
վաւրդը մէկ կողմ, հայ-լրագրութիւ-
նը (բացառութեամբ) և վարչական
մարմինը մասնանիշ կ'առնեմք իբր ա-

պացոյց, ուրիշց ամեն ոք կարող է
ժողովրդեան կեանքն ևս խելամուծել:
Այս ամեն միւլութիւնքը ազգի մը յա-
ռաջագիմութեան և վերաշինութեան
տարերքը և հիմունքը սնչացընող ու-
տիճներ են. որովհետեւ ամեն օգտա-
կար գործ սիրոյ և միութեան ծնունդ է,
ուր անձնասիրութիւնը, որոյ հետե-
ւանքն է շահամոլութիւնը, կը տիրէ.
հոն սէր և միութիւն որսնելը յիմարու-
թիւն գտնելը հրաշք է ըստ մեզ, վասն զի
անձնասիրութիւնը (խորքուն նշանա-
կութեամբ) ներհակ է մարդասիրու-
թեան կամ ընկերասիրութեան սկզբանց:
Մարդասիրութեան հարկանքը որչափ
ընդարձակ է, նոյնչափ անձուկ է անձ-
նասիրութեանը, որովհետեւ մինչդեռ
առաջնոյն առարկայն համայն մարդ-
կութիւնն է. ընդհակառակը վերջնոյնը
կամ սոսկ անձ մը, և կամ ընտանիք
մ' է: Չեմք ուղեր հոս անձնասիրու-
թեան հետեւանք եղող ամեն չարիք
մի աւ մի ստորագրել. այլ այս միայն
կասեմք, որ ազգային ամենաստրին
պաշտօնէն սկիսող մինչեւ ամենարար-
ձրոյ պաշտօնէն սկիսող և հոգին գերող
անձնասիրութիւնն է պատճառ: Այս-
դին կենսական խնդրոյ երեսի վերայ
մնալուն:

Ինչպէս խաւարը՝ լուսոյ, նոյնպէս
այս միւլութիւնքը մարդկային պարտուց
պսկասութիւնն են. վասն զի երբ մարդ-
իւր մանկութեան հասակին մէջ ճա-
նաչէ ըստ ամենայնի իւր ամեն պար-
տաւորութիւնքը, անհնարին է, որ
նորա մէջ մուտ գտնեն արտաքոյ պար-
տուց որ և իցէ կիրք կամ մոլութիւն:
Արեւմտեան մեր դպրոցները ազգային
մանկտեաց՝ պարտուց վերայ ճանաչ-
ողութիւն կամ գաղափար չեն տար,
որովհետեւ եթէ իւր ծոցն ընդունած
ուսանողաց ճանտներ իրենց պարտա-
ւորութիւնքը, անկարելի էր, որ ազ-

գին մէջ տյալալի թերութիւնք լինելին :
 Ահաւասիկ այս եւս երկրորդ աստ-
 ցոյց մ' է , որ բարոյական կրթու-
 թիւնը մեր դպրոցաց մէջ մուտ չէ
 գտած և բնաւ արժէք չունի Ազգին
 ապագայն պատրաստողաց աչքին .
 վասն զի մինչեւ հիմա դպրոցներէն ար-
 ձակուած ուսումնաւարտ աշակերտ-
 ներէն չեմք տեսած մէկը և կամ լսած՝
 որ լինի այնպէս , ինչպէս բարոյական
 օրէնքը ամեն մարդոյ վերայ պարտք
 կ'դնէ , այսինքն լինիլ պարտաճանաչ
 և պարտականտար մարդ . կամ աւելի
 պարզ տեսնք . մինչեւ հիմա մեր զըզ-
 րոյները չեն հասուցած կապարեալ մարդ ,
 օգրախար անբամ մարդկային ընկերու-
 թեան , ճշմարիտ քաղաքացի և հարապա-
 րակ Հայրենեաց և Արեւելոց :

Արդ՝ քանի որ ազգային դպրոցնե-
 րը Ազգին մանկոյն կատարեալ մարդ ,
 օգտակար անգամ մարդկային ընկե-
 րութեան , ճշմարիտ քաղաքացի և հա-
 բաղատ զաւակ Հայրենեաց և Արեւելո-
 ց առնելու փոյթն ու ջանքը չունին ,
 տրեմն մինչեւ ցարդ ինչ ուսուցած են
 և այժմ ինչ կուսուցանեն . — գրել եւ
 կարդալ : Այսպէս ասելով՝ մենք չեմք
 այդաներ գրել և կարդալ իմանալը .
 ասել չեմք ուղեր , որ գրել ու կար-
 դալ իմանալը գէշ և վնասակար է , ե-
 թէ օգտակարն 'ի գործ գրուի : Սա-
 կացն ցաւ 'ի սիրտ կը խոտոտմանիմք ,
 որ մեր Ազգին մէջ գրել ու կարդալ ի
 ժանալը նենգ , խարդախ և սրտաւր-
 ակէս բան մը դարձած է , որովհետեւ
 այն որ մէկ քիչ գրել և կարդալ կու-
 սանի . փոխանակ ճշմարտութեան ,
 ուղղութեան և ժողովրդեան բարւոյն
 և օգտին ծառայեցնելու , ընդհակա-
 ռակն կը տեսնեմք , որ սոսկութեան ,
 ամեն կերպ խարդախութեան և ժո-
 ղովորդի յուզման եւ սրտակոման
 համար կը ծառայեցնէ : Ասանկերուս

առաջոյց են ամենօրեայ հրատարա-
 կութիւնք , թէ թղթակցութիւնք եւ
 թէ զանազան յօդուածակերպ գրուած
 ներք , զորս եթէ մի առ մի քննէ մարդ
 պիտի գտնէ , որ կամ շահասիրութե-
 համար կուսակցութե մը պաշտպանու-
 թիւն և մի այլ կուսակցութեան սպա-
 րաւէ , կամ այս ինչ անձի դէմ նախա-
 տինք և լուտանք , կամ առաջնորդի
 մը համար անուանարկում և կամ վեր-
 ջապէս գաւառի մը ժողովրդեան խա-
 ղաղ վիճակը վրդովելու համար շատ
 մը գրգռիչ գրութիւնք և կամ օգտա-
 կար սկիզբանց դէմ անմոական պայ-
 քար : Պարզ կերպով կերեւի՝ որ այս
 պիտի գրել և կարդալը ամենափոքր օ-
 գուտ մը չառնելէն զատ , մեծամեծ
 չարեաց և աղէտից պատճառ կը լինի .
 վասն զի այս տեսակ հրատարակու-
 թիւնք ժողովրդոց բարոյականութիւնը
 կրտաւանանեն և ժողովուրդը կը դիակ-
 նացնեն օգտակար խորհրդածութեանց
 եւ քննադատութեանց նկատմամբ ,
 Այս մասին մեք ինքնին տեսած եմք
 մարդիկ , որք աւելի սիրով և փափա-
 գանօք կը կարդան շարժալի յօդուած
 մը , քան թէ Աւետարանի կամ Սուրբ
 Արոց տուն մը : Այս՝ ժողովրդեան մը
 անկենդանութեան յայտնի նշանն է . վա-
 րն զի ամեն բարի և սուրբ զգացմունք-
 ները , որով մարդ վառ և աշխոյժ կը
 լինի , կը նշանակէ , որ նոցա մէջ մարած
 են ամենեւին :

Այլ կարդալ և գրել իմանալուն
 հետեւանքն է առաջնորդական ազգա-
 վնաս խնդիրները , որք միշտ անպակաս
 են . միշտ գաւառները ասով կը տագ-
 նառնին Սոյն կարդալ և գրել իմացող
 առաջնորդները , որք բնաւ չեն գիտեր
 իրենց կոչումը և պարտքը , ինչ դերեր
 չեն խաղացած և չը պիտի խաղան այ-
 սուհետեւ միամիտ ժողովրդեան գըլ-
 խուն , քանիք քանիք կեղծ մահաբազրու-

Թիւններ չեն յօրինած յանուն և 'ի դիմաց Ժողովրդեան . միմիայն իրենց շահամոլական և փառասիրական դիտումներն յառաջ վարելու համար ինչ դիմակներու տակ չեն ծածկուեր . յանուն ազգասիրութե , յանուն կրօնի և եկեղեցւոյ , յանուն յառաջագիմութեան ինչ կեղեքումներ չեն գործեր 'ի շնորհըս միայն լոկ գրել և կարդալ իմանալուն : Այրանի , հազար երանի կրօնէր , եթէ բնաւ չը գիտնային այս տեսակ գրել և կարդալ , որով գոնէ չէին յաջողեր ընդունիլ այս տեսակ պաշտօն մը և այդչափ չարիք գործելու միջոց չէին ունենար :

Արդ՝ միթէ այս տեսակ գրել եւ կարդալ ուսուցանող դպրոցները Ագգիւս յառաջագիմութեան նշան են . միթէ Ագգիւս պարծախք են : Աստ մեզ աւելի լաւ կը լինէր եթէ ունենայինք մէկ դպրոց , որ ուսուցանէր մարդկային աւան պարտաւորութիւնքը . բան թէ այսպէս գրել և կարդալ ուսուցանող հարիւր դպրոց ունենալ : Թէ մեր դըպրոցաց սոյն դրութիւնը ինչ գլխաւոր պատճառներ է յառաջ եկած է , միւս անգամ կը խօսիմք այս մասին վերայ :

(Շարունակելի :)

Ք . Ս . Խ .

ՖԵՆԵՐԻ ՀԵՐՁՈՒԱԾՐ ()

« Բանագրեց զմեզ Դիէնէրի Ժողովքը , սակայն ասով աւելի ազատեց ըզմեզ : Իրեն մեղի դէմ թափած անէծքը՝ իբրեւ մայիս ամսոյն մեղմ անծրեմ՝ իջաւ մեր գլխոյն վրայ , որ է նշան դարնանային վերանորոգութեան :

(*) Սոյն ընտիր յօդուածը արժանի կը համարիմք Մատն պատուական լրագրէն առնելով ՍԺԻ մէջ կրկին հրատարակել :

Այնչափ դարեր մեր վրայ ծանրաբեռնեցին , և թշուառութեան , տղի տութեան և անարգութեան մէջ ըզմեզ տառապեցնելէն վերջը կը յանդգնի եւս մերթելու զմեզ Վրիստոսի եւ կեղեցիէն , յանուն Հոգւոյն Սրբոյ , նոյն իսկ սրդւոյն Աստուծոյ՝ որ մարդկան ներելու համար միայն յաշխարհ եկաւ :

Ահ , ինչ բաւ ախտի ըլլայ այն սիրոյ Աստուածը իւր հրեշտակներուն՝ երբ տեսաւ որ շատ մը եպիսկոպոստներ և Աբբահիմանտրիտներ իր վեց միլիոն որդիքները ձեռքէն յափշտակելու հեղինակութիւն իրմէ առած կը կարծեն :

Արդարեւ յիմարութիւն մը մանաւանդ թէ ըսեմ ամբարշտութիւն և անարգանք մը ըրած կըլլային Պուէ դարները աստուածային արդարութե դէմ՝ եթէ կարծէին որ Աստուած այս անիրաւ նզովքին հաստատութիւն տուած ըլլայ :

Բնաւ հոգերնիս չէ ()ոյներէն բաժնուելուս համար , ոչ մեր՝ և ոչ ալ Ուղղութիւն եկեղեցւոյն նկատմամբ :

Ամենեւին մեր կրօնքին վարդապետութեանց մէջ նորութիւն մը մուծած չեմք , ոչ աւելցուցած եմք եւ ոչ ալ նշանախեց մը անգամ հանած եմք անոնցմէ : Արդարեւ շատ ժամանակ յառաջ կրնայինք ()ուհաց լուծը թօթափել՝ եթէ կամենային որ և իցէ հերետիկոսութեամբ մը ուղղութիւն հաւատքէն զարտուղի : Այն իսկ Դիէնէրի Ժողովքն ալ իւր կոնդակին մէջ ոչ թէ հերետիկոսութեան մը համար զմեզ կը դատապարտէ , այլ նորահաս յանցանքի մը համար , այսինքն Ագգայնութեան համար , որ ուրիշ բան չէ՝ եթէ ոչ պաշտպանութիւն մեր իրաւանցի իբրեւ մարդ և իբրեւ ազգ : Ագգայնութիւնն ոչ միայն յանցանք մը

չէ, այլ մանաւանդ թէ վսեմ և ազ-
նուական զգացմանց մէկն է՝ զոր Մու-
սուաճ դրոշմած է մարդուն սրտին
մէջ. ուստի ոչ երբէք եկեղեցական
դատաստանի մը կրնայ ենթարկուիլ,
այլ բոլորովին երկրաւոր իրաց դասին
մէջ համարուած է: Ուրեմն Վէնէրի
խեղճն այլալոճ պէտք է ըլլայ, երբ
որ իւր նզովքին մէջ երկրաւոր պատ-
ճառները միայն հիմն կը բռնէ պատ-
ժելու համար զմեզ իբր թէ մենք աչ-
խարհական գաղափարները կրօնակա-
նին հետ շփոթած ըլլանք:

Իսկ իրեն այս նզովքին կոնդակն
իւր գլուխը պիտի դառնայ յար և նը-
ման այն սլաքին՝ որն որ յետոս դառ-
նալով միեցաւ հեթանոսի մը սրտին
մէջ, երբ որ այս անօրէնը սրբագործ-
եալ նշխարին դէմ նետեց զայն:

Վէնէրի ժողովքին դէմ ըրած մեր
տմեն բողոքներուս մէջ բնաւ կրօնա-
կան մասին զեղծումն կրօնանիրաւու-
թիւն գործած չենք, այո՛, այս նկատ-
մամբ միայն կրնար նզովքը մեր վրայ
տեղադր Ուստի Վէնէրի ժողովին ձեռ-
նարկն ուրիշ փաստ մ' ալ պիտի աւել-
ցնէ՝ այնչափ բազմաթիւ փաստերուն
վրայ, որք կը հաստատեն յայտնապէս
թէ ինչպէս Յունաց քահանաները՝
կուրացեալք տիրապետութեան եւ
ընչաքաղցութեան կիրքերէն՝ չեն խրդ-
ճեր զՄստուած իրենց շահուցը գործի
սունուլ:

Ուղղափառ ըլլանուս համար մի-
թէ նուաճ պիտի ըլլան մեր մարդկու-
թեան իրաւունքները: Մստուած ըզ-
մեզ մարդ ստեղծելէն ետքը՝ միթէ
հրաման եւս տուած չէ՞ պաշտպանե-
լու այս իրաւունքները, զորս մարդ-
կութեան հետ միաբան ստացած եմք:
Մստուած Պուլղար ըրաւ զմեզ. ուս-
տի կանխաւի Վէնէրի ժողովքը թէ
որ այս Մստուածային գործն իբր ան-

միտ, անդիկանոնական և 'ի դատ կո-
չելու արժանի սեպէ 'ի Սուրբ Սիւն
հոգոսն: Վիսցած ըլլայ որ այս կայծը
զոր Մստուած մեր սրտին մէջ վառած
է, այս Պուլղար ազգայնութեան կայ-
ծը կ'ըսեմ, միշտ պիտի բորբոքի մեր
սրտին մէջ, և մեր իրաւունքն է եւ
նոյն իսկ մարդկութեան իրաւունք՝ պա-
հել և պահպանել զայն: Իրաւունք ու-
նիք դարձեալ խօսակից ըլլալու Մստ-
ուածային ճշմարտութեան հետ մեր
սեփական լեզուով՝ զոր Մստուած մեր
հագւոյն բացատրութեան յարմար և
պատշաճ դատեց: Իրաւունք ունինք
վերջապէս կրթուելու, մխիթարուելու
և բարիխորհուրդներ ընդունելու մեր
ազգային քահանայներէն, որոնց ոչ մի-
այն լեզունին կը հասկնանք, այլ և ա-
նոնց սրտին բաբախմունքները մեր սրտ-
տին բաբախմանց հետ զուգընթաց են:

Ս'եր իրաւանց արդար պահանջու-
ղութիւնները կրօնական վարդապե-
տութեան բնաւ չեն վնասեր, միայն
գիւրին եւ աւելն ներքին կրնեն Մն-
փոփոխ և միայնակ ճշմարտութեան
հետ ունեցած յարաբերութիւննիս:
Եւ ահա ասոր համար մեր մայրենի
լեզունին կիրաւութիւնը քաղցր եւ
հարկաւոր կը համարինք: Ըրդեօք
Վէնէրի Պապը չի՞ պախարակէր Վա-
տիկանու Պապը՝ երբոր այս յետինը
կաթովիկ հասարակութեան անձանթ
եղած լեզու մը գործածել կը հրամա-
յէ, և այսպէս անոր առ Մստուած
խղճմտանքը կը խռովէ: Ս'իթէ վատ-
թարագոյն եւս չէ՞ր գործէր Վէնէր՝
երբոր ոչ միայն մեր եկեղեցեաց եւ
գալորցաց մէջ իրեն լեզուն գործա-
ծել կուտար, այլ եւ նոյն իսկ մեր
հայրենիքէն եւս բնաջնջ ընել կը ջա-
նար մայրենի լեզունիս: Եւ այսպէս
մեզմէ մէկը, որ կարող չէր յունական
լեզունին արտասանութեան վարժուիլ

տգիտութեան խաւարին մէջ կը խառ-
խալէր, զուրկ Մատուածային և մարդ-
կային դիտութենէ, դատապարտեալ
գետնաքարշ ըլլալով թշուառ արար
մինչեւ ի գերեզման մահու : Սակայն
ընդաւ ըսածնիս ընտանեաց մը խորին
եւ վաւեր զգացմանց մէկն է : Որչափ
մեծ կը լըսէր մեր սրտին ցաւն՝ եթէ
յերկինս ընտրելոց կայանին մէջ չը
կարենայինք գտնել մեզի սիրելի եղած
առարկայները : Ըրդ նոյնպիսի սրտա-
ցաւ մը կը խառնէր մեր յաւիտենա-
կան երջանիս թիւերը՝ եթէ զուրկ ըլ-
լար մեր լեզուն այն բազմաձայն ներ-
գաշնակութենէն՝ զոր յոգնաթիւ ժո-
ղովուրդք պիտի հնչեն Մատուծոյ ա-
թոռոյն չորս կողմը :

Ուրեմն ընդունայն տեղ վախցնել
կը կարծեն զմեզ ըսելով որ այս հերձ-
ուածն ուղղակի ուղղափառութեան
գոյութեանը դէմ կուտանայ, հերձ-
ուած մը, զոր եւ ոչ իսկ մենք գրը-
գրաւեցինք : Գիտենք Վեատարանէն
որ եկեղեցին հովիւն պիտի բաղնի,
պիտի բաժնուի աշխարհային փառա-
սիրութենէ, սուտ մարգարէից յիմա-
բարանութենէ, և այս՝ մինչեւ այն
օրը՝ յորում եկեղեցին պիտի օթեւա-
նի լայնատորած բնակութեան եւ
պայծառափայլ յաւերժական լուսոյ
մէջ՝ զոր աչք Վարձրեայն կ'սփռէ
յանհունս : Գիտենք դարձեալ որ Որ
դին Մատուած իւր քաւութեան զո-
հը միայն խաչին վերայ մեռնելովը չը
լրացուց, այլ և մինչեւ ցմահ տիրե-
լով, ոչ միայն իւր սիրելի թշնամեա-
ցը համար, այլ և այն անձանց կուրու-
թեան՝ և կրից որք իրենք դիրենք իրեն
բարեկամ կը կարծեն, և նոյն իսկ ա-
նոնց համար ալ որք քահանայական օ-
ծութիւնը ճակատներուն վրայ կը կը-
րեն և որոց իւր հօտին խնամքը յանձ-
նած էր Վրիստոս :

Ոչ, ուղղափառութիւնը (Յունաց
և Պուղարաց մէջ եղած բաժանու-
մէն բնաւ վնաս) մը չկրե՛ր, մանաւանդ
թէ կը շահէ : Պուղար ժողովրդեան
մը արտաքին ձեւերը կը փոխուին,
այլ հոգին նոյն կը մնայ : Մտորուան
օրս նոյն են (Յոյները ինչ որ էին եր-
բեմն, այսինքն, հոգեւոր կուսակա-
նէր, Սկեպտիկեան ազանդոյն և թանձ-
րամիտ աւերարդապաշտութեան հա-
կամետը : Գիր ասոնց վրայ բարոյա-
կան խմստից խանդարմունքները, ու
րովք խորամանկութիւնը յաջորակու-
թեան տեղ կը բռնեն, ստութիւնը
քաղաքագիտութիւն կը կարծեն, և
մատակութիւնն իրրեւ ճշմարիտ
սրտածառաբանութիւն կը գովեն, ու
ւաղակութիւն դիւցազնութիւն կան-
ուանեն և անարգ ցանկութիւններն
իրրեւ ի բերթողոց հռչակելի հաճու-
թիւններ կը քարոզեն : Յոյն ազգին
բնաւորութիւնը յայտնապէս և գիւրու-
թեամբ կը տեսնուի իրենց զարմոց-
ման նիւթ եղած դիւցազներուն վը-
րայ : Ողիսեւս, զորն որ շատ անգամ
Հոմերոս անմահ շատուածոց հետ
կը բաղդատէ, նենգաւոր, աւազակ
և ուխտագրութ մէկն էր իսկ Սկրատ
զոր իրենց մեծահանձար արանց ամե-
նառաքինին կը կարծեն, Վրիստոսի
պղծութեամբը կը հեշտանար :

Մյուս, այսպիսի բնաւորութեամբ
կրնայ ազգ մը փառաւոր և թերեւս
երբեմն սիրելի ըլլալ, բայց ոչ երբէք
քրիստոնէութիւնը կրնայ այսպիսի ե-
ղանակաւ իւր խիստ վնասութիւնը և
անարատ ազդեցութիւնը պահել,
տկարացաւ նա Յունաց մարտիրոսնե-
րէն շնչած մեզի զեպիւսէն : Վրիստո-
նէութեան համար, որ զհոգութեան,
արիութեան և անխախտ բարոյա-
կանի կրօնք է, կորովի էակներ պէտք
է, ուղիղ մաքով, խղիղ սրտիւ եւ

առողջ փափաքանօք, էակներ՝ որ ձեզ նման ըլլան, ո՛ր սիրելի Պուլլարք։ Աւրախացէք ուրեմն, փասն զի Հելլենացւոց աստականիչ թողչական խարէութիւններէն ազատեցաք, որոց մէջ թերեւս կրնայիք ձեր կորուստթիւնը և հոգիներն ազատեցաք յատկութիւնը կորստցնել։ Բրիտանիական օրէնքը, ահա հաբեկեալ Յունաց մէջ շնչած վատաւորը օղէն, պիտի ապաստանի ձեր կազմասիներուն ներքեւ կենդանատու զեփիւռներուն և ձեր գովացուցիչ ջրոց ախտներին։ Հոն իւր ամբը ծութեան սպիտակ գգեսոր պիտի հագնի, պիտի ստանայ իւր նախկին սուղ ջուրէն և իւր կերպարանքը, որն որ ջինջ է իբրեւ զանմեղութիւն, խորին իբրեւ դաւախտեանականութիւն, և երջանիկ իբրեւ զարքայութիւն։

Աւրեմն, Պուլլար եղբայրներ, դուք չէք ողբոյ արժանին և ոչ ալ վախնալու առիթ մը ունիք։ Արկիւղը այն յանդուգները միայն կրնն՝ որք սրբապիղծ ձեռք մը գրին ուխտի տապալակին վրայ։ Դուք նախ սղոցէք այն մարտնչալ եղբայրները՝ որք իրենց յետին վայրկենին մէջ անբացատրելի անձկութիւն մը պիտի դգան՝ երբ պիտի տեսնան որ իրենց և աստուածային դատաւորին մէջ երեւան պիտի ելայ 1872 սեպտեմբերի 17 երրորդ օրը, յորում՝ Այայեկին յանցանքը նորոգել ժըպրհեցան։

Անոր խնդրածը բարորակ օրինաւոր էր, և ինչ որ ստացանք՝ բնաւ խիղճ մը չպիտի պատճառէ մեզի իբր թէ ասորինաւորապէս ստացած ըլլանք, և ոչ ալ երկիւղ մը պիտի ազդէ, իբր թէ վտանգաւոր բան մը ըլլայ ստացածնիս։ Ինչ է խնդրածնիս և ինչ ստացանք։ Ինքնօրինութիւն մի, զոր Աերվից, Ռումանից, Արուսաղէմայ, Անտիոքայ, Աղէքսանդրից, Աթէնքի և Փեդ-

րասպուրկի եկեղեցիները կը վայելն։ Արդ, միթէ այս եկեղեցիները նուազ ուղղափառ կը սեպուին ազատ ըլլալ նուն համար։ Թող կուտան արդեօք որ իրենց այս անկախութիւնը յափը տակուի վսինսլով որ չըլլայ թէ ինչ ների ժողովին շանթածիւղ նզովները իրենց գլուխն ալ թափեն։ Ինչո՞ւ այս եկեղեցեաց շնորհեալ իրաւունքները մեզի ալ չպիտի պատկանին, ինչպէս որ կը պատկանին խաւարամած տգիտութենէն և շիսթութենէն յառաջ, որք դժբաղդաբար մթապնեցին մեր բաղդն աշխարհքիս մէջ։ Այսօրուան օրս նորէն կ'ստանանք զանոնք իբր մեր յատուկ ինչքը։ այսօրուան օրս հաւատար եղանք մեր ուղղափառ եղբարցը, ինչպէս որ իրաւունք ունէինք ըլլալու։ Ինչեքի ժողովքը կը զանոց մեզի այս հաւատարութիւնը, ուրեմն ցուցունէ թող մեզի ոսպնածանը, որով Աստուայ պէս մենք ալ վաճառած ըլլանք մեր բրիտանիական ազատութիւնը, զոր Բրիտոնո Տէրն մեր սրբագեւեց իւր որդւոցը յերկինս վերանալու առնն։

Պուլլար եղբայրներ, ընդունեցէք ուրեմն մեր բարեմաղթութիւնները զոր կրննք ձեր յաղթութեան վրայ։ Յառաջ ժողովք յաղթութիւնիդ աշխարհան համբերութեամբ մը, որ զձեզ մարդկան գովեստոյ և յարգութեան մեծապէս արժանի կրնէ։ գլուխ տարիք յաղթութիւնիդ առանց խոտորելու և ոչ գիծ մը ձեր սուրբ հարց հաւատքէն, և ահա այս՝ Աստուծոյ օրհնութիւնները ձեր գլխոյն վրայ պիտի իջեցնէ։ Արի և միանգամայն բարեպաշտ եղաք։ Աղետաբեր քունէ մը արթնցաք ի գիրկ Ս. կրօնից և արդարութեան։ Այս երկու հզօր դայեակները սնուցանեն միշտ զձեզ և ձեր սերունդը։

Յարգեցէք, սիրեցէք և պաշտպա-
նեցէք նաեւ ձեր բոլոր զօրութեամբն
և կարողութեամբ այս Ազատիչ, Ա-
հափառ կայսրը, որուն վճիռները նոր
գար մը կը բանան ձեր առջեւը, զոր
կրնաք իրաւամբ ձեր բարօրութեան
և փառաց դար կոչել:

Այսուհետեւ ձեր որդւոց կրթու-
թիւնը ձեռքերնիդ է: Այն եռանդը
զոր ցուցուցիք և ՚ի գործ դրիք դրս-
ւոցներ հաստատելու համար՝ նոյն իսկ
ձեր գերութեան շղթաները թօթա-
փած առաջին օրերուն մէջ, նոյն ե-
ռանդը՝ կրսեմ, բաւական ցոյց մ'էր,
որ աւելի եւս պիտի բորբոքէր զայն ՚ի
նոյն նպատակ հիմա՝ որ բոլորովին ա-
զատութիւննիդ ստացաք: Այլ եւս
անիրաւ տուրքեր չպիտի ծանրաբեռ-
նէ օտարականը ձեր քրտանց պտղոց
վրայ. պիտի մշակէք կրկնապատիկ յա-
րատելութեամբ Պուլղար երկիրը՝ որ
լին է անհուն գանձիւք:

Չեր մասնաւոր իրողութեանց հա-
մար այլ ոչ եւս պիտի ներկայանաք այն
գատաւորաց առջեւ՝ որք միակերպ և
յառաջագոյն իսկ կը դատաւարութիւն
դձեղ. ձեր ազգակիցները դատերնիդ
պիտի տեսնան: Ա՛ւ՜ աճառականութիւն
նիդ երթալով պիտի մեծնայ, որովհե-
տեւ չպիտի գան այլ եւս (Յոյները մե-
նալաճառ ընելու, ինչպէս որ կրնէին
Ֆինէրի ճիղուիթութեան պաշտպա-
նութեամբն և միջամիտութեամբ: Այ-
սպահովութիւն և հովանաւորութիւն
պիտի գտնաք ձեր շահուցը համար,
վասն զի ասկէ վերջը ձեր կրօնական
գլխաւորաց նոր դիրքը հզօր ազդեցու-
թիւն մի պիտի բանեցնէ այս մասիս
մէջ:

Արդ՝ հիմա, Պուլղար եղբայրներ,
փրկութիւն և արիւթթիւն: Ա՛նէք
վստահութեամբ կենդանի ժողովրդոց
գասուն մէջ: Ա՛խրքերնիդ, բազուկ

նիդ, դաշտերնիդ, վերջապէս ձեր ա-
մենայն ինչ գործունէութեան նոր ե-
ռանդ մի դգենուն: Հնէ ուրեմն ու-
րախութեամբ Պուլղարի լեզուն ար-
գաւանդ մարգերուն և կանաչագեղ
խիտ անտառաց մէջ: Տիրէ առա-
տութիւնը ձեր մէջը, որ դուստր է
մշտատեւ աշխատութեան, ժուժկա-
լութեան և ապահովութեան, որով և
ձեր կնիկներն ալ պարծին իրենց բեղ-
մաւորութեան վրայ, առանց սովէ
վախնալու իրենց սիրոյ պտղոց համար:
Չեր գործունէութիւնը, պայծառու-
թիւնն և երջանկութիւնը նկատէ գոհ
աչօք Վրիսաոս Տէրն մեր, որուն ա-
նուամբը միայն յաղթեցիք և որ յաղ-
թեց ձեզի հետ միատեղ:

Ե Ր Կ Ո Ւ Ի Ի Օ Մ Ք

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՇՏՕՆԵՒԹ ՈՒՂԱՌԱԾ

(Շարունակութիւն, տես թիւ 10.)

Այնպէս զբաւեռնէն անվայել գո-
վեստներ շուրջել մասնաւոր անձանց,
որք իրօք արժանաւորութիւն չունին,
և այս կերպիւ կողմ որսալ որ իւր վը-
կայականին ստորագրութիւն դնեն.
վկայականն առնուլ և աստ և անդ
շրջիլ, մարդիկներ հրաւիրել, իւր ան-
ձին ջատագով կանգնիլ, չի գործած
գործքերը թուել և մեծցնել, որպէս
զի յօժարին ստորագրել. այսպիսի ան-
սիրտ, անհոգի և անգործ պաշտօնեայ
մը ի՞նչ պիտի յուսայ կ'ըսեմ իւր ժո-
ղովուրդէն, եթէ ոչ անհնազանդու-
թիւն, անարգանք, նախատինք և ար-
տորսնք:

Արագիւրներէն ոմանց ալ այսպի-
սեաց ախոյեան և ջատագով կանգնիլը
բիշ զարմանալի չէ. մանաւանդ երբ նոյն
լրագիրը ուրիշ նուազ յանցաւոր եկե-

ղեցականներ կրնախառնել և կ'անարգէ, որով լրագրական պաշտօնէութեան մէջ իւր արժանիքն ալ չափել տուած կը լինի, սակայն աւելի աղէկ կը լինէր երբ ինքն լրագրական ասպարէզը թողուր և իւր գովածն ալ առաքելութեան պաշտօնը թողուր. այն ատեն գոնէ գայթակղութիւն չի տալով՝ գուցէ ազգին աւելի օգտակար կը լինէին:

Հարբ, պատուական Հարբ, մեզ յանձնուած գործոյն պարապինք հաւատարմութեամբ, գործենք շարունակ, տքնինք անդադար, որպէս զի թուութեամբ թէ մեր գործն ու պաշտօնը աղարատած ու արդիւնքէ և վարձքէ զրկուած չըլլանք և թէ չարին ծուղակը չի բռնուինք. քանզի անգործութիւնը աղբիւր է մեղաց և մոլութեան, թելադիր է չարութեան և անկարգութեան, վերջապէս ծնող է հիւանդութեանց և մահու:

Ենթործ պաշտօնեայն արդարութեամբ ապրելու յոյս չունի, Եստուծոյ վրայ հաւատք ալ չունի, քանզի նորա օրինաց հնազանդած չունի, իւր յոյսը բոլոր իւր անձին վրայ դրած է, այս պատճառաւ ԱԳԱՀ ալ կը լինի:

Գ.

ԱԳԱՀ ՈՒԹԻՒՆ

Ահ, ինչ դժբաղդ պատահութիւններ են որք սախաւս են զմեզ խօսիլ այնպիսի նիւթերու վերայ որոց յաւիտեան անծանօթ մնալը երջանկութիւն էր. այնպիսի ստորագրելներ կամ աւուաններ են սոքա, որ մարդու վերայ խիստ անօրոյց երեւոյթներ կը տպաւորեն, մանաւանդ եկեղեցւոյ պաշտօնէին վերայ: Հատ մը փնասակար քաղաններու միութենէն կազմուած

հրէշային գազան մի եթէ իրութիւն ունենար՝ ինչ այլանդակ տեսիլ և ինչ փնասակար յատկութիւն որ կրնար ունենալ, նոյնն ունի այսպիսի այլանդակ մոլութիւններով վարակեալ անձը. և ահաւասիկ գործուած և հրապարակաւ գովուած ամբարշտութիւնները կը հաստատեն այսպիսի հրէշներու գոյութիւնը: Եկեղեցւոյ պաշտօնեայն ըստ ամենայնի անարատ պէտք է լինի. այլ ափոս, ահա կը տեսնեմք որ այսպիսի սոսկալի արատներով շաղուած ու տոգորուած են, եւ յաւալի է որ այս նուաստ ու յաճ անուններն իրապէս ստորագրուած են նոցա վերայ: Երբեմն փոքրիկ զգուշութիւններ կը լինին ընտրելի եկեղեցականին արտաքին մարմնաւոր արատներու մասին, այլ հոգեկանին, ոչ երբեք. բարոյական արատները՝ որ աւելի մեծ են և տգեղ, աչքի չեն զարներ, և ամենափոքր քրն ութութիւն մի, թեթեւ զգուշութիւն մի անգամ չեն լինիր նոցա համար. ուստի ուրիշ արատներէ և ախտերէ զատ ահա Եփեսոսիւն ըստուած չար ու խիստ փնասակար խտով վարակեալ կը հռչակուին եկեղեցականք, ոչ աստութիւն այլ բուն իրենց գործերով և ներկայ օրինակներով ապացուցուած:

Եգահութիւնը, որ առանց օգտակար գործածութեան ինչք ստանալու անյտդ բաղձանք ըսել է, խիստ տգեղ շարժառիթներ և անհամար չար հետեւութիւններ ունի: Եգահութեան կը շարժի մարդ կամ մահկանացու լինելը չը յիշելով. կամ նախախնամութեան վրայ հաւատք չունենալով կամ ծոյլ, անգործ և անպիտան լինելով, և կամ իւր ճամբիտ սիրոյ առարկայէն, Եստուծոյ հեռացած՝ նիւթին եւ ապականութեան յարելով:

Իսկ ագահութեան հետեւանքն ո՞վ կարէ թուել, Եգահութիւնն զմարդ

խարդախ , նենգամիտ եւ խաբէրայ
կ'առնէ , ագահ եղողը ստուծիւնը
ճշմարտութիւն կը համարի . գողը-
ծիւնը իւր իրաւունքը կը սեպէ . զըր-
կանքն արդարութեան տեղ կը դնէ ,
երբեմն քծնող ու շողորորթ է . ուրիշ
անգամ յանդուգն , խրոխտ և կատաղի .
գործ մի ընելու կամ նոյն իսկ իւր
պարտքը կատարելու համար մեծամեծ
պահանջք և չափէ դուրս փոխարինու-
թիւն կուզէ . բազմիցս իւր պահանջած
վարձքն աւելորդովն հանգերձ ընդու-
նելով՝ պարտազանց կը գտնուի . և կը
պատճառէ թէ աշխարհ-իւնն յարգ ճանչ-
ցող չէ իսկ , արժանեաց կամեաք փոխարինու-
թիւն չէ իսկ . սակայն լի ու լի փոխարին-
նութիւնը գրողանը զետեղելէ վերջը
կամ կը մոռանայ և կամ քիչ կը հա-
մարի . վերջսպէս իրաւունք , պարտք ,
արդարութիւն , ճշմարտութիւն ագա-
հին համար նշանակութիւն չունին . մի-
այն խաբէլու համար իբր պատրուակ
սոյն բառերը բերնով միայն կը գոր-
ծածէ : Ագահը յուզմունքն ու խռ-
վութիւնը կը սիրէ . շատ անգամ ինքն
իսկ կը սերմանէ զայն , ուրկէ կը յու-
սայ իւր ագահութեան ճարակ տուող
սրտուղ քաղել : Այսչափ և դեռ եւս
ասկէ շատ աւելի չարութեանց ծնող է
ագահութիւնը , ինչպէս և Առաքեալն
իսկ , մայր ամենայն չարութեանց և հոսպալ-
քութիւն կ'անուանէ զայն : Այս իրաւի
սիրոյ կուտաշտութենէ զատ ինչ
կրնայ անուանիլ ագահութիւնը , բա-
նի որ ի տէր անձնական շահու վա-
ռեալ կը զոհէ ամեն բան , անսակիս
կրնէ բոլոր օրէնք , սրբութիւն , քաղց-
րութիւն , խաղաղութիւն եւ արդա-
րութիւն , և իւր մէկ վատ հաճոյիցը
կը զոհէ ամեն բան , կը զոհէ ընկերին
իրաւունքը և նոյն իսկ ընկերը :

Արդ՝ ո՞վ Հարբ , կուզեմ հարցնել
ձեզ խոնարհաբար թէ ո՞ր շարժառթիւ

կը կրէք դուք ագահութեան ակտը ,
ինչ բանի համար աւելորդներու կը
ցանկայք և ինչք կը դիպէք . մի թէ
թշուառին օգնելու համար , սուտ էք ,
զայդ չէք ընել որ ձեր բուն պարտքն է .
հապա ինչ է պատճառը որ չէք յա-
գենար ժողովելով և չէք բաւականա-
նար ամբարներով . - ձեր ապագային հա-
մար . - Այո , բայց չէք գիտեր որ ձեր
գանձարանը ժողովուրդն է , ինչո՞ւ այն-
պէս չէք վարուիր որ ձեր բոլոր կենաց
ամեն վիճակին մէջ ալ ժողովուրդը
գուրգուրայ ձեր վրայ . հեթանոս թա-
գաւոր մը ձեզմէ աւելի լաւ չի խորհե-
ցաւ , երբ իւր գանձը ուր լինելը հար-
ցուած ատեն բարեկրամները ցոյց տը-
ւաւ : Այսարհի փոփոխական գէպքե-
րը ձեզ խրատ ընելու չափ ալ խմաւ
տառիւրութիւն չունիք , չէք տեսներ որ
այդ նիւթական ինչքերն միշտ տրա-
մադրուած նպատակներուն չեն ծա-
ռայեր , կամ կըտղաւին , կամ կը կտր-
ջին , կը գողցուին և կամ արկեղներու
մէջ անօգուտ կը բանտարկուին եւ
հուսկ ուրեմն ձեզմէ կը բաժնուին :

Վաք չէք յիշեր , որ մահկանացու
էք և օր մը պիտի թողուք այդ ամենը
այլոց ձեռքը , որովք շատ անգամ նո-
ցա չարեաց ալ պատճառ պիտի լինիք
ձեր մահուանէն վերջն անգամ , քանզի
այլք անաշխատ տիրելով ձեր ընկոյ՝
կամ ծոյլ պիտի լինին և կամ զեղխ ու
շուայ :

Վաք՝ ննջեցելոց դադարին առջեւ
կեցած նուաստ ակնկալութեամբ նըն-
ջեցեալին անարժան գովեստներ հիւ-
սած ատեննի՞դ ալ չէք յիշեր որ օր մի
դուք ևս նորա պէս պիտի անշնչանայք
և ձեր հոգին արդար դատաւորի մը
առջեւ պատասխանատուութեան պիտի
ներկայանայ , և այն ատեն ձեր դիզածն
ու պատրաստածը ինչ պիտի լինի և ինչ
օգուտ պիտի ընէ ձեզ : Երբ Տէր Յի

սուս Վրիստոսի պատուէրը ձեր սրբախն չէ ազդած : “Վրիստէ քու ունեցածդ, ազբատաց տուր և իմ ետեւէս եկուր, եթէ երկու ունիս, մին աղքատին տուր” : միթէ ասոնք քեզ համար չեն, ինչու կը վախնաս, մի գուցէ կը կատկածիս որ անօթի կամ մերկ կը մնաս : ինչո՞ւ հոգի : ուրեմն քու ազատութիւնդ՝ Վախախնամութեան վերայ հաւատք չունենալէդ յառաջ կուգայ :

Վահայն այս եւս վճռաբար ըսելու կը վարանիմ, բանդի տեսնել ամեն բան որ իրենց սահմանին մէջ ընթանալով Վախախնամութեան շնորհիւ կը վաշեւն ամեն բան, ամեն վայրկեան նը կատել, զգալ, իմանալ եւ վայելել Վախախնամութեան պարգեւները, և նորա վերայ հաւատք չունենալ, անլուծանելի հակասութիւն մի կը լինի, ասով ինքնին ապացուցած պիտի լինիք ձեր ծայրայեղ տգիտութիւնը և կամ բնութեան օրէնքէն դուրս անզգայութիւնը :

Հեթանոս փիլիսոփայն տիեզերաց նախախնամական օրէնքը քննելով Վրտուածութիւնը կը տեսնէ և չի վարաներ նոյն իսկ զՎրտուած նախախնամութիւն կոչելու : դուք, մարդ Վրտուծոյ, քրիստոնեայ, ատուածային գթութեան ու խնամոց մէջ ողորուած անոր չի հաւատարմիդ, զայն չի ճանչնալիդ անհասկանալի բան է : Վա մանաւանդ չէ որ դուք նոյն նախախնամութեան պաշտօնեայներն էք, չէ որ նորա գթութիւնը և ողորմութիւնը քարոզելու փառքն ու պատիւն ունիք, չի հաւտացած բաներնիդ ինչպէս կը քարոզէք, և եթէ քարոզէք ալ ինչ արդիւնք պիտի ունենաք : Վայց միթէ դուք ձեր բոլոր կենաց մէջ չէք տա տահած այնպիսի ստիպողական վայրկենի մը՝ ուր պորդապէս նշմարած լը

նիք Վախախնամութեան մատը, — անկարելի է որ պատահած չը լինիք : բայց այնպիսի պարագայներու մէջ ձեզ եղած խնամքն ու օգնութիւնը գուցէ ձեր աշարջութեան և հանճարին արդիւնքն համարելով ուրացած էք նորա խնամքը եւ հաւատքնիդ պակտած է նորա վերայ : Վայց կ'աղաչեմ, գոնէ լսեցէք ձեր Վարդապետին, եթէ նորա ճշմարիտ աշակերտներն էք և եթէ կը հաւատայք անոր : — Յորժամ առաքելցի զձեզ քարոզել միթէ կարօտացայք իմիք : — Վսեն ցնա ո՛չ : — Մըդ՝ ընդէն խորհիք ՚ի սիրտս ձեր, թէ հաց ոչ բարձաք : Սի հոգայք վասն վաղուեան վաղուն վասն իւր հոգացի, զի շատ է աւուրն չար իւր :

Վյսպէս ահա քու վարդապետդ, ով ագահ պաշտօնեայ, քեզ չափաւրութիւն, բաւականատիրութիւն եւ աւելորդաց արհամարհութիւն սովորեցուց, դու այդ հեթանոսական մոլութիւնը ո՞րկէ սովորեցար : Յիսուս ըզքեզ գործելու կը կանչէ և անով քու կարեւոր պիտոյքդ ամեն անգ պատրաստ կը ցուցնէ : հաւատարիմ ու գործունեայ մշակին համար ոչ վարձք և ոչ պիտոյք կը պակսի, ուրեմն ագահ պաշտօնեայն ծուլութեան համար ագահութիւն կ'ընէ :

Վյո, ագահը կը աքնի ինչք զի զել, որպէս զի անգործ, ծոյլ և դատարկ մնայ : ունայնութիւնը պաշտէ և մարմինը պարարէ, սակայն իւր բընութեան օրէնքով ինքը կը պատժուի, քանզի նախ իւր ագահութիւնն յագեցնելու համար ստիպուած է չարաչար տանջուել թէպէտ և ասօրինի, մոռք և մարմնով յուզուիլ և վատաւ կիլ թէ և անտի : երկրորդ՝ քանի ինչքն աւելնայ նոյնպէս մտաց հոգը, մարմնոյ վիշտը և հոգւոյ տագնապն ու վրդովմունքը այնչափ կ'աւելնայ :

միշտ իւր սրաշտած կուռքը մեծցնելու եւ իւր տանջանքը բաղձնադատկելու բաղձանքը տիրելով վրան մշտադարձար ծառայ մի կը լինի , վատ եւ կաշկանդեալ գիրի մի կը դառնայ անոր , սրբաւոր մտօք և կամօք կը յարի այն բանին , կը սիրէ և կը պաշտէ զայն՝ որ իւր թշնամին ու դահիճն է . և ահա այն ատեն ամեն բան կը մոռանայ , պարտք , պաշտօն , ժողովուրդ , կրօնք , օրէնք , վերջապէս Մտուած , որով և ամենայն նուիրական ու սուրբ բաներ . իւր մը տաց առջեւ բողբոն ալ ունայնութիւն կը դառնան , իւր սիրած ու պաշտած արծաթը միայն հաստատուն էութիւն կը համարի , անկէ դուրս ամեն բան նախապաշարու մն է . բայց առ հարկի երեքեմն խաբէլու համար ինքն ալ աւնոնց հաւատալ և ընդունիլ կը կեղծէ . այս կեղծիքը երեքեմն ասոր անոր իրեն դաղափարակից կարծածներսն պարծանօք կը յայտնէ , էս ալ « Եղիպէս եմ , այնպիսի բաները լեմ ընդունիլ , և լեմ հաստատար կ'ըսէ . այսպիսիներէն մէկը գիտեմ , որ անգամ մի բարեբաղդաբար իրօք գիտնական և ճշմարիտ առտուածապաշտի մը կը հանդիսի , եւ կարծելով որ նա ալ իւր յիմարական գաղափարէն է , իւր դիմակը կը մերկանայ , կը յայտնէ անոր իւր ոգին և կը բանայ իւր սեւ սիրտը , բայց իւր անկկալութենէն դուրս արժանաւոր յանդիմանութիւն կը կրէ եւ խախտ ու խայտառակ կը լինի , բայց ամաչողը ո՞վ է : Վնաս այսպէս կ'ընէ այս անմիտը , թերեւս սին անկկալութեանց համար , որով կը յայտնէ թէ ինքն եւս ունայնամիտ և անպիտան մէկն է , լաւ գործեր ընելու անյարմար , շատախօս , ինքնագով և խաբեբայ է , որ և իբրեւ զղուելի և ատելի հրէշ մը բարոյակոն աշխարհէն արտաքսուած է :

Ինչ համար ագահ կ'ըսեն , Հայր ,

չէս արտակառիկ այս անունէն , դու ճշմարտութեան աշակերտ , դու մըշտապէս անխախտ Վին պաշտօնեայ , աւմօթ չէս համարիլ փոխել զիսոս միայն Մտուածոյքու չնչին բաղձանացդ դիւրեղմանելի առարկային հետ , և նուիրել աստուածավայել սէրը , պատիւը եւ ոգնութիւնը այնպիսի իրաց որք պատիր են և ապականացու : Վու ագահ էս , ուրեմն անիրաւ ու խաբեբայ ես , հետեւաբար անարժան ճրջմարտութեան պաշտօնեայ լինելու , պէտք է կամ դու ինքնին կամաւ հրաժարիս , կամ զքեզ արժանացնես , և կամ արդարութիւնը զքեզ պիտի խալտառակէ և հալածէ :

— Բայց ո՞վ լսաւ թէ էս ագահ եմ :

— Երազիրներն՝ երեքեմն , իսկ ժողովուրդն ամեն օր կ'աղաղակեն , կը գոչեն , կը բողբոքեն չէս լսեր . անարգութեան ցեխն ալ չէս տեսներ , որոյ մէջ անձնովին թաղուած էս , բայց զարմանք չէ , քանզի այդպիսի ցանկութիւններն ու սէրը մարդս կոյր եւ խուլ կ'ընեն :

— Վնոնք սուտ են , և տարապարտ տեղը զիս կանարգեն . էս գթած , մարդասէր ու բարեսիրտ մէկն եմ , իմ դուռս և ձեռքս բաց է որբոց և սյւրեաց , սրանդուխտներն ինձմով միւլ թարուած են , ոչ երբէք առ իս դիւմոններէն մին ունայնաձեռն հանած եմ , թշուառը միշտ գորովագութ հայր մի գտած է յիս , դուն ալ կը զրոյարտես այդպիսի անարգար յանդիմանութիւններ ընելովդ . ագահը դիւղուած ինչք կուենայ , ուր է իմ աւելորդ ինչքս :

— Սեծախօս Հայր , ինքնագովութիւնդ ասպցող է նախ՝ որ սուտը դուն ես և արժանի տակաւին բիւր անարգանաց , երկրորդ՝ այդ բերնուց տալիս արժանաց խօսքերդ լոկ իրաւ

բու ետեւէ շարուած աննշան բառեր են քեզ համար և լոկ խաբէրու եւ թմրեցնելու միջոց . երբորդ՝ ես չեմ զրպարտեր Հայր, այլ խրատ կուտամ որ զգոյշ կենաս, հեռանաս մոլութիւն ներէ, բայց դու այնչափ ցնորած ու բանականութիւնդ կորուսած ես, որ խրատն ու յանդիմանութիւնը զրպարտութիւն կը սեպես և փոխանակ գործով ստերու ամեն ըսուածները և իրօք արդարանալու, անպատկառ համար ձախութեամբ անձիդ ներքոյններ կը հիւսես կամ հիւսել կուտաս . չորրորդ՝ և իբր անհերքելի ապացոյց ինչք չունենալդ յառաջ կը բերես, լաւ, կը խոստովանիմ, որ այդ չափ անյագաբար ժողովելէդ յետոյ պէտք է իր դիպումն ունենալ, ինչպէս քեզ նմաններուն շատերն ունին, և խնամով կը պաշտպանեն բարկութեան աւուր մէջ իրենց դատապարտութեանը համար, բայց դու բան չունիս և դարձեալ ագահ կը կոչուիս այնպէս չէ . ախիս, այդ մեծ զրկանք և անտանելի զրպարտութիւն է, բայց կեցիր, շուտով չի դատենք, կ'երեւի թէ դուն ալ ուրիշ ակտով ակտացած ես, ուստի զքեզ ալ աղէկ մը նկարելու համար բարոյականին տուած սահմաններուն մէջ փոքրիկ փութիւնութիւն մը ընելով ագահութեան վրայ երկու աջք նայինք . Ագահութիւնը, իրաւ է, որ ինչք գիղել է՝ առանց օգտակար գործածութեան, բայց մի թէ այս, առանց օգտակար գործածութեան, խօքը պարանոյ տեղը դրուած է, ոչ . այլ զքեզ մատնանիշ խայտառակելու համար՝ իմաստունը նախատեսած, կամ թէ ըսենք՝ փորձառու եղած և դրած է . Արդ ագահ մը կը ժողվէ և կը դիզէ, ագահ մ'ալ կը ժողովէ և կը վառնէ . մէկը կը ժողվէ անօգուտ պահելու համար, միւսը անյագաբար կը ժողվէ անօգուտ վատնելու համար, և ահա դու այս

երկրորդ տեսակէն ես, որոյ ապացոյց կը ներկայացնեմ քեզ բու հաճոյիցդ, կամացդ եւ կրիցդ բոլոր թելադրութեանց անխափան կատարուիր, խընջեցնել ընել, տեսարաններ երթալ ծպտած, անօգուտ և անպիտան ծախսեր ընել, խուլութիւններ յարուցանել, մէկ կողմէն քաշել, գողնալ, կողոտել, և միւս կողմէն դատ վատարկելու համար կաշառներ և ընծաներ տալ, վերջապէս մոխել, ուր որ քու կամքդ կուզէ . հերթ է՝ որ խելքդ փչէ բանի մի ծախք ընել, անօգուտ և վնասակար խի լինելն ալ ըսեն քեզ չես համոզուիր, կամացդ և անձնիշխանութեանդ դէմ բռնաբարութիւն կը համարիս, իսկ օգտակարին ոչ երբէք, զրկեալին չես օգներ, խնդրողին չես տար, կարօտը չես յագեցներ, իսկ դու միշտ չափ, ըսելով կ'առնուս . այս քու մոլութեանդ նոր անուն մի տալու համար կը վարանիմք, քանզի մի չէ, այլ բաղադրեալ է, ուստի առնելու համար ագահ և վատնելու համար շատ կ'ըսենք, և տակաւին մանրանք կարդ ամբողջ աւարտած չենք լինիր :

Աղէ ըսէ տեսնեմ, այսպիսի վարմունքով քովդ ստացուածք կրնայ մը նալ, և միթէ չը լինելը ապացոյց մի է քու առատաձեռնութեանդ, քան լիցի . ամեն առաքինութիւն կամ մոլութիւն իրենց սահմանն ունին . նպատակ, գործ և արդիւնք, ահա ասանք կ'ապացուցանեն ամեն բան . անօգուտ է քու բերնովդ զքեզ գովեստիւ արդարացնելու ձգնիլդ, քանզի կեանքդ կ'ապացուցանէ որ մոխելու, վատնելու, ուտելու, խմելու, հագուելու և շքուելու համար շուտ ես, իսկ այդ կիրքերդ յագեցնելու համար ժողոված ատենդ ագահ ես, ագահութեան բոլոր չարագոյթ նշանները իբրեւ ոլորդալի միանգամայն և սոսկալի պալար

ներ երեւցնելով դէմքիդ և բոլոր մարմնոյդ վերայ :

Այլ պաշտօնեայ , ըսէ տեսնեմք ի՞նչ կրնանակէ հովուական պաշտօնիդ մէջ միշտ թերի գտնուիլ և շարունակ ժողովուրդն ամբաստանել իբր թէ չեն հոգար , ի՞նչ կրնանակէ շարունակ ապրուստեդ դժգոհ լինելը , ժողովրդեան օգտին համար կատարել լէք մէկ գործոյդ , կամ առաջնորդութիւն ընելու և կամ մինչեւ անգամ դիւղի մը քահանայն իւր քահանայութիւնը կատարելու համար սակարկութիւններ ընել , փոխ առնուլ եւ չը վճարել , պարտք զանալ . մեծագումար պարտքեր ընել եւ ժողովրդեան վճարել տալ , ու դարձեալ ժողովուրդին ամբաստանել , դարձեալ ինքզինք կարօտ ցոյց տալով գանգատիլ ժողովրդէն և արհամարհել զայն . կ'աղուչեմ , Հայր , ըսէ ինձ , այս ամենը ագահութիւն , ընչաքաղցութիւն , արծաթսիրութիւն , զոչաքաղութի կամ անարդու ցած շահախնդրութիւն չէ ի՞նչէ : Ի՞նչ է նպատակդ , ո՞չ ապաքէն ապրիլ . ողորմելի մարդ , դու քեզ յանձնուած գործը հաւատարմութեամբ կատարէ , այն ատեն ոչ անօթի կը մնաս և ոչ ալ մերի . ամեն կողմէ խնամք և ձեռքն տուութիւն չեն պակսիր : Սակայն քու աչքդ աւելորդ ցանկութեամբ կը մարմնացի , անոր համար արդար վստահով և չափաւոր կեանքով չես կարող գոհ լինել , և այդպիսի սրտով բնաւ գոհ լինելիք չունիս : Պաշտօնեայդ Այլ կեղեցւոյ , հացէ և չափաւոր զգեստեղատ ուրիշ ի՞նչ պէտք ունիս , և միթէ աւելորդ ունի հանդերձ ժողովուրդը հատուցած չէ , ինձ աղաչնորհ , դու ժողովուրդը կը քամահես . զայն հովուելու չես զնջանիր , կամ սակարկութիւն և չափազանց վարձք կ'առաջարկես և կը կարծես թէ գոհ պիտի լի

նիս , բայց մի խաբուիր քու աչքդ . հաստաղտի ծակ կարասն է , որչափ լեցուի , միշտ դատարի պիտի լինի , միշտ կ'արօտ , շարունակ դժգոհ , և այդ քու անյապարհ բաղձանքէդ տախտակ պիտի տանջուիս ամեն օր . այդ կեղեքիչ բաղձանքդ շարունակ պիտի կրծէ սիրտդ ու լեարդդ , պիտի դրաւէ հոգեկան կարողութիւններդ և ամեն բարեմասնութեանց անընդունակ պիտի ընէ ըզքեզ . որով ոչ երբէք կ'սրալ պիտի լինի խորհիլ պաշտօն , պարտք , ժողովուրդ , հոգի , եւ Աստուած . քանզի քու այն ագահութեան տենջդ կեղբոնացուցած է այս ամենը մէկ բանի վերայ . այսինքն հարստութեան , որ ունայնութեան մէկ պարզ գազափարն է , եւ զինքն սոսցսոյն ալ իրեն պէս կ'ունայնացնէ :

(Երբեք չի լինի :)

ԲԺԻՇԿ ՄԻՆԱՍ Տ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ ՄԱՐՏԻՉԵԱՆՑ ԱԳՈՒԼԻՍԵՑԻ

Այն Հայազգի ազնիւ երիտասարդը՝ որ թիֆլիզի Աերսիսեան դպրոցի մէջ իւր ուսմանն աւարտելով մտածէր Ներքինի Վիչլիմեան Համալսարանը և կ'ուսանէր ռուսումն թշկուութեան և վերաբուժութեան , ուրախութեամբ սրտի կ'իմանաւ , որ ներկայ տարւոյս մէջ օրինաւոր հարցաքննութիւն տալով եւ () գոտոսի 24ին երեւելի թշկուաց առջեւ իւր գրած պաշարական խօսքը (դիտե՛րտասիրո՛ն) պաշտպանելով արժանացած է թշկուութեան վիսյագիրը ընդունելու : Հայազգի թշկի Գիւրգապի (որոյ մի գերմաներէն տպագիր օրինակը ղըրկուած է մեզ) կը ծառէ () վարիտովի ,

այսինքն ձուարանի յոշտման և ձուարանի փամփուռոնները ճանաչելու վերայ և կը բաղկանայ երեք մասերէ և մի յաւելուածէ: Առաջին մասն կը պարունակէ (Օվարիոսոմի պատմութիւնը, այսինքն թէ Նշպէս այս մահու չափ երկիր զարի անդամահատական գործողութիւնը (օպերատիոն) սակաւ առ սակաւ կատարելագործութեան հասնելով՝ միւս գործողութեանց կարգը դասուած է: Արդարեւ մասն է ճանաչողութիւն, թէ ինչպէս կը զարգանան կանանց ձուարանի փամփուռոններն և ինչ նշաններ յառաջ կը բերեն, որովք բժիշկը իսկապէս վերահասու կը լինի և ապա գործողութեան կըսկըսի, որ մի քուցէ անմտաբար հիւանդի փորը պատառէ և չգտնէ այն, ինչ որ կը կարծէր, ինչպէս շատ անգամ պատահած է: Արդարեւ մասն բուն գործողութեան (օպերատիոն) վերայ կը ծառէ, թէ որ եղանակն է ամենաաւելն և անխտանգն: Իսկ յաւելուածն է երեւելի ծննդաբան Պրոֆէսոր Սարտինի կատարած մի գործողութեան նկարագիրը, որուն գործակից գլուխուած է մեր Հայազգի բժիշկն Պ. Սիրոյեանց: Ուստի և այս առթիւ յիշեալ Պրոֆէսորէն իրաւունք ստացած է հրատարակել իւր դիտելու սիոնին հետ, իբրեւ խիստ հետաքրքրական հատուած ամեն բժշկաց համար:

Ինդհանրապէս մեր Հայազգի աղէկ բժշկի հրատարակած դիտելու սիոնի պարունակութենէն յայտնապէս կ'երեւի, որ հետախուզած է ոչ միայն Վերմանացի հեղինակաց կարծիքները, այլ և միւս ազգաց, մանաւանդ Անգլիացուց և Վերիկացուց: Ուստի և մենք ներկայ փոքրիկ հրատարակութեամբ մեծ ուրախութիւն կըզգամք շնորհաւորել իւր յաջողութիւնը, որ

իւր հայրենիքը վերագառնալով փառաւոր տեղ պիտի գրաւէ Ռուստտանի բժշկաց կարգին մէջ յօգուտ և ի պարծանս Ազգիս:

Արժան կը համարիմք նաեւ յաւելուել, որ մեր Հայազգի բժիշկը Վոդթոն գաւառի մի գիւղական քահանայի զաւակ է, և երբ Աերսիսեան դպրոցը մտաւ, իւր չափահասութե պատճառաւ ամենեւին յոյս չը կար այսպիսի ընդարձակ յառաջագիմութեան: Սակայն իրաւամբ ասուած է, որ աշխատանքն աւելն Բանի յաղիւ է. նա քանի մի տարուան մէջ ամեն դժուարութեանց յաղթեց և յառաջագէմ աշակերտաց կարգն անցաւ եւ նոյն դպրոցի ուսմամբ չը բաւականալով՝ դիմեց բարերար մարդկանց օժանդակութեան և ի վերջոյ յաջողեցաւ Աերլինի համալսարանը մտնել նախ փիլիսոփայական և գրագիտական դասեր լսելով և ապա բժշկութեան ուսումն իրեն համար ասպարէզ ընտրելով: Աերսիսեան դպրոցը, որոյ այժմեան վիճակը մեզ անձանօթ է, իւր քանի մի նախկին չըջաններուն մէջ այն գեղեցիկ յատկութիւնն ունէր, որ բաց ի իւր մատակարարած ուսմունքներէն, անցագուրդ և անշուք սէր կը վառէր աշակերտաց սրտին մէջ ամեն նիւթական դժուարութեանց յաղթել և Աւրոպական համալսարանները մտնել: Թողումք նոյն չըջաններուն մէջ Ռուսիոյ զանազան համալսարանները դիմող Աերսիսեան դպրոցի բաղմութիւ ընտիր Հայ սրտանիները, նոյն իսկ Տ. Սիրոյեանցի ընկերակիցներէն քանի մի հատն Վերմանիոյ համալսարանները դիմեցին 1864ին որք են Պ. Աբելեանց, Պ. Թամաշլեանց, Պ. Զիկէնեանց, Պ. Նազարեկեանց, որոց առաջին երկուսն արդէն իրենց երկրագործական և տըն-

տեսագիտական ուսմունքն աւարտելով Հայրենիք վերագարձած են . իսկ վերջին երկուսն տախտակն Օւսկերիւն մէջ դաստիարակութեան վսեմ պաշտօնի համար կը պատրաստուին , զանազան ուսումնական ակումբներու մէջ գտնուելով և տեսական ու փորձառական կրթութեանց մէջ հմտաւ նալով :

ԺԱՄԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹ

Ընտան 6 ին Յունաց պատրիարքը և Սուսաց Հիւսպատոսը քաղաքս ժամանեցին , որ Ն . Բ . Նիգոլայ դքսին ուղեկից եղած էին մինչեւ Յոպպէ : Նոյն գիշերը Յունաց Ս . Պատրիարքը տեղւոյս Կառավարիչը իւր բով կանչելով բաւական երկար խօսակցելէն վերջը իւր անձին պահպանութեանը համար շաքիկներ խնդրեց , որպէս զի պատրիարքորանի դուռը կենսն և միաբանութեան մուտքն արգիլեն , վախնալով որ չորայ թէ իրեն վնաս մի հասցնեն . քանզի Պուղարները բանադրելու մասին դեռ որոշ պատասխան տուած չէր՝ պատճառ բռնելով Երթոյաղուն Վքսին գալուստը :

— 7 ին գիշերը Ս . Պատրիարքը տեղացի Նասլուսցի , Յոպպէցի և Վաղղէցի ութսուն հոգիի չափ հետն առած և զապթիներով շրջապատուալ Կառավարչին գնաց եւ յայտնեց որ Սիաբանութիւն իրեն ներհակ է . բայց ժողովուրդը զինքը չի թողուր , ներկոյ գանուսդ ութսուն հոգի ալ միաբերան կ'աղաղակէին թէ , « Սենք մեր Պատրիարքէն չեմք անցնիր » : Ս . Պատ-

րիարքը յայտնեց նաև թէ ինքը իւր փոխանորդն ու թարգմանը պաշտօնէ դադարեցուցած է , և թէ կը հաստատէ սոյն պաշտօններուն խալիլ — Այուս անուն անձը , (որ տեղւոյս Կառավարութեան Երաբերէն Խանդիւրի միւտիւրին է .) յայտարարեց նաև որ այն երկու գլխաւոր հակառակորդները պէտք են աքսորուիլ :

Սոյն խնդրոց վերայ երկար խօսակցելէն վերջը Ս . Պատրիարքը մեկնեցաւ : Բիւ մը յետոյ Սուսաց Հիւսպատոսը կառավարչին ներկայանալով ըսաւ որ պատրիարքին ապահովութեան համար պէտք է հսկողութիւն ընել , ապա թէ ոչ պատահած վնասուն զինքը սրտասխանատու կը ճանչնայ իւրեւ քաղաքիս Կառավարիչ և բարեկարգութեան հսկող : Ժամէ մը յետոյ վսեմ Կառավարիչը Յոյն միաբանութեան ղրկեց և Պատրիարքին հակառակող թարգմանը և Նենիամին — Խօսնի տէս անուն վարդապետը կանչեց , բայց փոխան այն երկու մարդուն ամբողջ միաբանութիւնը հանդերձ փոխանորդ եպիսկոպոսով , ընդ ամենը 130 հոգի կառավարչին կը ներկայանան ըսելով թէ մեք ամենքնիս իրարմէ չենք զատուիր . Կառավարչն խաղաղասիրական միջոցներ բռնելով կըսկըսի համոզել , յորդորել և խրատել , որ հանդարտին և իրենց պատրիարքին հետ հաշտուին և անոր հնազանդին , բայց միաբանք առանց համոզուելու՝ ըսին , թէ այսօրուանէ մեք զայն ոչ պատրիարք , ոչ հայր և ոչ իսկ քիստոնեայ կը ճանչնամք , նորա անունը պատարագի մէջ յիշատակելէ դադրած ենք . քանզի նա այնուհետև անհաւատ է և այլն և այլն : Վսեմ Կառավարիչը տեսնելով հաշտութեան անկարելութիւնը յայտնեց որ եթէ իսկեք զայն Պատրիարք չեն ճանաչէր՝

ինքը կը ծանօնայ, բանի որ հրովարտակ
ուսնի . և դառնալով փոխանորդին ու
Թարգմանին կ'ըսէ . Պատրիարքն ըզ
Չեզ սրաշտօնէ դադրեցուց և ձեր
տեղն ուրիշը նշանակեց , դուք այսու
հետեւ ոչ փոխանորդ և ոչ ալ Թարգ
ման էք . — Հոգ չէ որ դուք մեր սրաշ
տօնակալը լծիւնը չէք ծանօնար . հե
րիք է որ միաբանութիւնը կը ծանօ
նայ որ ահա ներկայէ կարող ես հար
ցանել : Իսկ միաբանութիւնը առանց
իսկ հարցման սպասելու պատասխա
նեցին , թէ սա մեր Թարգմանն և սա
մեր փոխանորդն է : Լսյա հեռագիր
մը ներկայացուցին կառավարին , զոր
հանդերձ պատրիարքին տուածովը իս
կոյն հեռագրեց բարձրագոյն դուռը :
Նոյն գիշեր (Յոյն Ս'իաբանութիւնը
ամեն տեղ հեռագրով իմացուցին թէ
այսուհետեւ Քերկոս Պատրիարքը
պէտք է յիշատակելէ դադարին :

— 10 ին . երեկոյեան ժամը մէկին
Կառավարիչը Պատրիարքին կամօքը
Յունաց վանքին մէջ հարիւրի չափ
ղապթիէ Թողելով գուռը գոյել սը
ւաւ և բանալիները իրեն յանձնեց :
Թարգմանն ու Բենիամինը կանչեց աբ
սորելու համար , որք առանց ընդդի
մութեան քացին , ընկերակցութեամբ
փոխանորդ եպիսկոպոսին . կառավա
րիչը առանձին սենեակ մի գնել հը
րամայեց , դուռը զապթիէներ կանգ
նեցնելով , վեց ժամէն յետոյ եպիսկո
պոսին լուր զրկեց որ մեկնի , բայց նա
յայտնեց որ առանց իւր ընկերներուն
չէ կարող մեկնիլ . նոյն գիշերը վանքին
բողոքտիքը և Յունաց փողոցները սրա
հապաններով շրջապատուած էր . Բեթ
ղէհէմի Ս'ետրոպոլիտը ժողովագեան
Թախանձանքէն ստիպեալ նոյն գիշեր
ժամը 9 ին . քաղաքս հասաւ և Պատ
րիարքին հետ հաշտուեցաւ :

— 11 ին , Յոյն միաբանութիւնը Կա

ռավարչէն խնդրեց որ վանքին դուռը
բացուի . փոքր դուռը միայն բացուե
ցաւ և զապթիէներն ելան , բայց ի
երկու հատէն որ սրահպանութեան հա
մար հ.ն մնացին : Նոյն օրը ժամը 8 ին
Պատրիարքը լուր կը զրկէ մի քանի
վարդապետաց , որ գան և իրեն հետ
սուրբ Յարութիւն երթան , բայց բը
նաւ մէկը չեկաւ : Իսկ Պատրիարքը
բռնի երկու վարդապետ բերել տուաւ
որոց մինն զինքը չի ծանօնալը յայտնեց
և միւսը երկիւղէն պատասխան մի չի
կրցաւ տալ և երկու ապտակ ուտելով
արտաքսեցաւ . ապա Պատրիարքը տե
ղացի քահանաներու և զապթիէներու
ընկերութեամբ գնաց սուրբ Յարու
թիւն ուր կը գտնուէր նաև Սուսաց
Հիւպատոսը : Սուրբ Յարութեան
Տեսուչը ըստ սովորութեան չի գիմա
ւորեց զինքը ժամերգութեան առնն
միաբան միանդամ չի կար :

— 12 ին Լուստ Պատրիարքը նոյն
անձանց և Հելլենացոց Հիւպատոսին
ընկերութեամբ եւ Յոյն ժողովրդոց
մեծ բաղմութեամբ նորէն սուրբ Յա
րութիւն գնաց , և պատարագի ըզ
գեստ ուղեւոր համար Տեսչին լուր
զրկեց , բայց պատասխան անգամ չըս
տանալով պատրիարքարանէն բերել
տուաւ , ժամարարն ինքն էր եւ ա
րարողութիւնը Յունարէն և Լատե
րէն լեզուաւ կատարուեցաւ : Ս'իա
բանք օտար տէրութեանց հիւպատո
սաց յայտնելով իրենց վիճակը , վար
դապետաց բանտարկութիւնը և վան
քին մէջ զապթիէ լինելը , սգնութիւն
խնդրեցին :

— 13 ին Բրուսիոյ Հիւպատոսին մի
ջամտութեամբ վարդապետները բան
տէն ազատեցան և վանուց դռները
կեցող զապթիէներն ետ կանչուեցան :

— 14 ին Կառավարչին Թախանձանք
վանքի դրան բանալիները ետ զրկեց

Պատրիարքը : — 16 ին միաբանութիւն Պօլսոյ Պատրիարքարանէն հեռագիր մի ստացաւ . որով կ'իմացնէր թէ սոքա հանգիստ և ապահով թող լինին . նոյն օրը Պատրիարքը քանի մի մեծամեծաց միջամտութիւն հաշտուիլ ուզեց . բայց անհնար եղաւ . քանզի միաբանութիւն բաց ՚ի Պուլղարաց բանագրութեան խնդիրէն (որուն կամակից չէ Պատրիարքը .) կը պահանջէ նաեւ 27 տարուան հաշիւ . զոր կ'ըսուի թէ Պատրիարքը տալ չէ ուզեր : — 17 ին Հայր Բենիամին երկու ուրիշ վարդապետք . կառավարութեան կողմէն տրուած ձիււոր զօրքերու հսկողութեամբ Յոսպէ իջան եւ Լատրիոյ շոգենաւով Պօլս մեկնեցան ընդդէմ կամաց իրենց Պատրիարքին . — նոյն օրը Պատրիարքը Բրուսիոյ Բեապանին բողբեց իւրհիւ պատուին ըրած միջամտութեւ համար :

— 19 ին Ս. Պատրիարքը վարդապետ մի զրկեց իւր կողմէն Յոսպէ Տեսչութեան պաշտօնիւ . որ 20 ին հոն հասնելով տեղացի Յոյն ժողովրդեան հետ վանքը կը մտնէ . ժողովուրդը նախկին տեսչին վրայ կը յարձակի . կառավարութեւ կողմէն գայմագամը ոստիկանութեան զինուորներով անխարգութեան առաջբը կ'առնու . յետոյ կառավարչէն ստացած հեռագրոյն համեմատ կ'ըստիպէ ըզնախկին տեսչի որ ամեն բան նոր եկողին յանձնէ . և նա ալ կը յանձնէ . հեռուէն ալ օրը սրտաւարագի ժամանակ ժողովուրդը նորէն կը յուզուի

և նախկին տեսչին վրայ կը յարձակի գողցես զայն սպաննելու նպատակաւ . և զինուորաց միջոցաւ վերստին խաղաղացաւ . և դուրս ելնելով սկսու աղաղակել . « Կեցցէ՛ արքայ . սրահ սին վարդապետք . » ժողովուրդը այսպէս սատարի յուզուած աղմուկներ հանելէ վերջ կը խաղաղի գայմագամին բռնած ազգու միջոցներով :

— 19 ին կէս փշերէն երեք ժամ յետոյ վախճանեցաւ Լատինաց Պատրիարքը Դօղէֆ—Ալպերկայ . երեք օր միայն հիւանդ պառկելով : — 20 ին առաւօտեան ժամն 5 ին օծման հանդէսը կատարեցաւ ուր ներկայ էին Հիւսպատոսք եւ մեծ բաղմութիւն : — 21 ին առաւօտ կանուխ իրենց եկեղեցւոյն տակ թաղեցին . մինչեւ թաղման օրը իրենց զանգակները գուժարկու տիրութեամբ կը հնչէին եւ Հիւսպատոսաց դրոշակներն կիտատ բացուած էին . — 22 ին Լատինաց միաբանութիւնը իրենց հանգստեցալ Պատրիարքին հոգւոյ հանգստեան համար Ս. Յարութեան տաճարը պատարագ մատուցին :

— Կ'իմանամք թէ Գամասկոսի ժողովուրդը իւր Պատրիարքը պաշտօնէն ձգել կուզէ . Պուլղարաց բանագրանքին կամակից լինելուն համար :

— Բաղաբիս Յունաց Պատրիարքն մէկ քանի պայմաններ առաջարկած է՝ ՚ի նպատտ իրենց տեղացի ժողովուրդեան . բայց թէ քանի հատ են և թէ ճիշտ ինչ են դեռ ստոյգ չիմացանք :

ՅԱՆԿ

ՆՈՅՆՄԻՆՐ

Բարոյական կրթութիւն իբրեւ առաջին խարիսխ ընկերական շինութեան . (շարահանդէս) .	241
Վէնէրի հերձուածը .	250
Երկու խօսք Եկեղեցւոյ պաշտօնէից ուղղուած . (շարահանդէս) .	254
Բժիշկ Սինաս Տ. Պաքրիշէւան Սկրտիշէանց Ագու- լիսէցի .	260
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ .	262

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա. Սիօնը ամսէ ամիս կը հրատարակուի 24 երեսն բաղկացեալ մէկուկէս
ութածալ թղթով .
- Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Մէքիսիյէ, հանգերձ Խանապարհի
ծախցովը կանխիկ վճարելի .
- Գ. Զատ տետրակ առնել աւելոյդ, պէտք է ամեն մէկ տետրին շարս գա-
հեկան վճարել .